## *ԹՅՈՒՆԻԿՆԵՐԻ ՈՒ ՄԿՆՅԱԿՆԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ*

## *ԳԱՆՁԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՂՆԵՐԸ*

*Շնորհակալություն ենք հայտնում հարգարժան թարգմանիչ Սոֆյա Պետրոսյանին*
*Թարգմանիչների խումբ*

### *Գլուխ 1.* Ծանոթություն մկնյակների հետ

Մի անգամ անտառի հարմարիկ բացատում, որի կողքով հոսում էր Հոտուկիկ դանդաղ գետակը, խոտերի մացառից դուրս նայեց ինչ-որ մեկի սիրունիկ սև քիթը:

Քիթը զգուշորեն հոտոտեց շուրջը, հետո երևաց նաև անտառաբնակչի ամբողջ մռութիկը: Գազանիկը խոժոռեց իր փափլիկ ունքերը: Նա միաժամանակ նմանվում էր և գերմանամկան, և գետնասկյուռի, և սկյուռիկի, և բոլոր կրծողների միասին վերցրած: Եթե որևէ մարդ տեսներ նրան, ապա անմիջապես զարմանքից կբացականչեր, չէ որ սա մկնյակների, հազվադեպ հանդիպող փոքրիկ կենդանիների, ներկայացուցիչ էր, որոնց մասին համարյա թե ոչ ոք չգիտի:

Մկնյակը թաթով ուղղեց իր ակնոցը: Այո-այո, ա՛մենաիսկական ակնոցը: Փոքրիկ կենդանին գտել էր դա ինչ-որ ժամանակ հին կաղնու տակ ու այդ ժամանակվանից համարում էր իրեն ամենախելացին մկնյակների գյուղում, չնայած նրան, որ դա այդպես չէր: Բացի ակնոցից նրա վրա կարելի էր տեսնել դեղին շապիկ ու նարնջագույն շալվարիկ, որի միջից դուրս էր նայում մեծ փափկամազ ծոպիկով պոչիկը : Այս սիրունիկի անունը Աղվանիկ էր:

Գազանիկը ևս մեկ անգամ տարուբերեց ունքերը ու ճարպկորեն բարձրացավ սոճենու կոճղի վրա:

- Ա՜յ քեզ բան…Տես, Չլմփիկ, - հիացած արտաշնչեց նա, նայելով բացատին:

Հենց այդ պահին մոտ ցատկեց երկրորդ մկնյակը, նույնպես վառ շորերով ու փափկամազ պոչիկով:

Աղվանիկն ու Չլմփիկը հիացած նայում էին բացատի կողմը, որտեղ հանգստանում էին մարդիք: Հենց պլաստմասե բեռնատար մեքենային տղայի ձեռքում:

- Ախր սա իսկական հրե՛շ է, ոչ թե մեքենա – վեր թռավ Չլմփիկը:

- Եթե մենք էլ ունենայինք սրանից: Պետք չէր լինի գանձերը մեջքի վրա քարշ տալ, չէ՞ - երազկոտ արտասանեց Աղվանիկը:

Բայց հանկարծ մկնյակների կողքով, տրորելով ծաղիկներն ու փակելով արևը, սլացավ մի աղջիկ, ու նրանք ստիպված եղան շուտափույթ պահկվել:

Բացատում ընդամենը չորս մառդ կար – հայրիկը, մայրիկը, Վիկտոր անունով տղան ու մի աղջիկ, որին ծնողները Սոփի էին անվանում:

Հայրիկը ձուկ էր որսում, մայրիկը գիրք էր կարդում, իսկ երեխաները անում էին այն, ինչ սովորաբար նրանց տարիքի մանուկները սիրում են անել բնության գրկում. խաղում էին խաղալիքներով, ցրելով շուրջբոլորը, վազվզում էին անտառով մեկ ու շատ աղմկում:

Սոֆին սիրալիր աղջնակ էր, շատ էր սիրում բնությունը ու կենդանիներին: Այդ պատճառով նա հաճախ խնդրում էր ծնողներից մեծ շուն գնել, և ցանկալի կլիներ վերցնել ոչ թե մեկին: Գոնե երկուսին, կարելի է և վեցին: Քանի որ ընտանիքը ապրում էր ոչ մեծ բնակարանում, շների հետ պետք կլիներ զբոսնել ամենաքիչը երկու անգամ օրական, շատ կերակրել, հավաքել բուրդը…և ոչ միայն բուրդը, լվանալ թաթերը ու պատվաստումներ անել: Սոֆին համոզում էր ծնողներին, որ այս ամենը ինքը կանի, բայց նրա հայրիկն ու մայրիկը քաջ գիտեին, թե իրականում ով է զբաղվելու նրանցով, և, իհարկե, դա Սոֆին չէր լինի: Այդ իսկ պատճառով նրանք ելք գտան – առայժմ նվիրեցին աղջկան ձկնիկներ, համստեր ու թութակ:

- Կկարողանաս հոգ տանել նրանց համար, այնժամ և շան մասին կմտածենք, - ասաց մայրիկը, հանձնելով կենդանիները ուրախացած աղջկան:

Այսօր բնության գիրկը մարդկանց հետ գնաց միայն համստերը, իսկ թութակը մնաց տանը: Սոֆին տեղավորեց վանդակը ջրի մոտ:

– Տես, ինչ գեղեցի՜կ է, Համսիկ, - բացականչեց աղջիկը, դիմելով համստերին:

- Ըհը, անասելի է, - առանց երևելի հրճվանքի մտածեց համստերը, տեսնես, ե՞րբ ենք տուն վերադառնալու:

Համստեր Համսիկը տնային կենդանի էր, ու հանդիպումը անծանոթ ու անկանխատեսելի վայրի բնության հետ նրա մեջ ոչ մի հիացմունք չարթնացրեց: Ավելի շուտ անբացատրելի, թեթև անհանգստություն:

- Մնա այստեղ ու հիացիր բնությամբ, իսկ ես մի քիչ խաղամ - ուրախացրեց կենդանուն Սոֆին ու վազեց, զվարճալիորեն թռչկոտելով: Համսիկը ճանապարհեց նրան հայացքով ու մնաց մեն-մենակ:

- Պանիր կուզեի - միտք անցավ կենդանու գլխով: Պանիր չկար: Հաշտվելով մտքի հետ, որ կենդանու ոչ բոլոր իղձերն են իրականանում, համստերը ինչ-որ ժամանակ նայում էր ջրին, հետո դրանից ձանձրացավ, պառկեց մեջքի վրա ու սկսեց ծուլորեն պտտել ետին թաթիկներով վանդակում տեղադրած անիվը : Բայց պանիրը հրաժարվում էր հեռանալ նրա մտքերից:

Շուտով, կեսօրից հետո, հայրիկը, հերթական անգամ ստուգելով խայծը կարթերի վրա, բարձրացրեց գլուխը ու նկատեց, որ ամպեր են հավաքվում, ու վատ չէր լինի հավաքվել ու քաղաք մեկնել, որպեսզի չթրջվել անձրևի տակ: Բացի դրանից ձուկ բռնելը չէր հաջողվում: Սակայն ո՞ր հայրը հրաժեշտ կտա բնությանը այսպիսի մանրույթների պատճառով: Բայց ամպը, ամպը լուրջ բան է: Երեխաները չուզելով համաձայնվեցին, որ ամպը լուրջ բան է, ու սկսեցին հավաքել իրերը: Վիկտորն ու Սոֆին դասավորում էին իրենց խաղալիքները, ծնողները փաթեթում էին իրերը ու դնում մեքենայի մեջ:

- Հայրիկ, ես չեմ գտնում իմ բեռնատարը – զարմացած ասաց տղան ու նորից սկսեց զննել խոտը ու փնտրել թփուտի մեջ:

- Դու թափթփո՜ւկ ես – ուրախ ծիծաղեց նրա քույրիկը ու շարունակեց հավաքել իր տիկնիկներն ու փափուկ խաղալիքները:

- Հեչ էլ թափթփուկ չեմ, ես հաստատ հիշում եմ, որ դրել եմ այստեղ, - նեղացած ասաց Վիտյան ու ծնկեց, որպեսզի ավելի լավ տեսնի խոտը:

- Երևում է, թյունիկներն են դա թաքցրել, - կատակեց մայրիկը, բռնելով սփռոցը, ու աչքով արեց հայրիկին:

- …կամ էլ մկնյակները, - ուրախ շարունակեց հայրիկը, խաղի մեջ մտնելով մայրիկի հետ: Հայրիկը շտապում էր ճանապարհ ընկնել անձրևից առաջ և հաճույքով միացել էր խաղին:

- Ի՞նչ մկնյակներ, - մռթմռթաց տղան, ծնկաչոք խոտերը բացելով:

- Մայրիկ, իսկ ովքե՞ր են թյունիկները, - հարցրեց աղջիկը, թափ տալով տիկնիկին կպած խոտի ցողունները:

- Մկնյակները փոքրիկ անտառային արարածներ են, մի քիչ մեծ սովորական համստերներից, կամ գերմանամկներից, այստեղից էլ գալիս է մկնյակ անվանումը - մըկ-նյակ-ներ - արտասանեց հայրիկը վանկերով:

- Իսկ ինչո՞վ են զբաղվում մկնյակները ու որտե՞ղ են նրանք ապրում: Ո՞ւմ են նման, - հետաքրքրվեց տղան ու մի րոպե դադարեց մեքենան փնտրելուց:

- Մկնյակները ապրում են անտառում, նրանց քչերն են տեսել, բայց ասում են, որ դա բրդոտ կենդանի է, պոչը սկյուռի պոչիկի նման ու ականջները ծոպիկավոր, - պատասխանեց հայրիկը:

- Իսկ զբաղվում են մկնյակները նրանով, որ միշտ գողանում են այն, ինչ հեշտ է գտնվում, կամ մոռացված է մարդկանց կողմից, - լրացրեց մայրիկը:

- Սովորական մկնյակը նման է համստերի կամ գետնասկյուռի, հագին շապիկ ու շալվարիկ, խոսում է ինչպես մարդկային լեզվով, այնպես էլ կենդանիների լեզուներով, մի խոսքով հեքիաթային արարած է, - հայրիկը մնացած ուտելիքով զամբյուղը դրեց մեքենայի մեջ ու փակեց բեռնախցիկը:

- Իսկ ո՞վ է թյունիկը, - իր հարցը հիշեցրեց աղջիկը:

- Թյունիկը նույն մկնյակն է, բայց ուրիշ ցեղից, - թյու-նիկ-ներ, - ավելացրեց մայրիկը վանկերով: - Թյունիկներն էլ են գողանում մարդկանց իրերը ու հավաքում ամեն թողածն ու մոռացածը:

- Իսկ որտե՞ղ կարելի է տեսնել մկնյակներին ու թյունիկներին, - Վիտյան արդեն չէր փնտրում իր մեքենան, նա ուշադիր լսում էր ծնողների պատմությունը:

- Ոչ մի տեղ, - պատասխանեց հայրիկը:

- Ինչպե՞ս թե՝ ոչ մի տեղ, - հիասթափված ասաց տղան ու, ի վերջո ետ նայելով իր բեռնատարը գտնելու հույսով, դանդաղ քայլերով գնաց մեքենայի մոտ:

- Ոչ մի տեղ, - բացատրեց մայրիկը, թափ տալով ու ծալելով սփռոցը - նշանակում է, որ մկնյակներն ու թյունիկները միայն հորինած հեքիաթային կերպարներ են ու իրականում գոյություն չունեն:

Պարզապես, երբ ինչ-որ մեկը ինչ-որ բան է կորցնում ու չի կարողանում գտնել, պատասխանատվությունից ազատվելու համար հենց այդպես էլ ասում է – թյունիկները չանթեցին կամ մկնյակները թռցրեցին, - ծիծաղեց հայրիկը:

Մկնյակները, որ նստած էին ոչ հեռու խոտի մեջ ու ամեն ինչ լսում էին, ցնցված էին խորապես:

- Ի՞նչ: Չանթեցի՞ն…Թռցրեցի՞ն… - Չլմփիկը նույնիսկ սկսեց զկռտալ զարմանքից:

Մկնյակի մեջքի խիտ մորթին զայրույթից փոխվեց դարչնա-մոխրագույնի: Բուրդը տեղ-տեղ մուգ շագանակագույն էր, իսկ փորիկինը՝ սպիտակ: Մկնյակի մեջքին սև զոլիկ էր, իսկ ականջներին ցոպիկներ էին: Փափկամազ պոչն էլ էր ցուպիկավոր: Արարածը հագել էր կարմիր (կամ շիկակարմիր) կարճ շալվարիկ խաչաձև ուսկապով ու բացկապույտ վերնաշապիկ:

Մի մկնյակ, մինչև վերջ լսելով մարդկանց դատողությունները, թաթիկով փակեց մռութիկը ու դատապարտված տարուբերեց գլուխը:

- Խոսք չունեմ, - մրթմրթաց նա թաթի միջից ու տխուր հոգոց քաշեց: Թաթը հեռացնելով մռութիկից, նա աչքի ծայրով նկատեց մի վանդակ, որը դրած էր ջրի մոտ: Մի արարած, որ շատ էր նման մկնյակի, պառկած էր վանդակի մեջ փորիկով դեպի վեր ու բավականին դժբախտ տեսք ուներ:

Մկնյակը մեկ-մեկ վազելով, տերևների ու խոտերի մեջ պաղկվելով ու միաձուլվելով հողակույտերի հետ հասավ վանդակին:

- Փըս-փըսս - կանչեց նա համստերին, թաթիկները կպցնելով վանդակի ձողիկներին:

- Վա՜յ, ո՞վ է այստեղ – վերադարձավ երազների աշխարհից իրականության մեջ համստերը, լսելով տարօրինակ ձայնը: Համստերը տեսավ մի վայրի կենդանու կարճ շալվարիկով, որ աչքերը չռած նայում էր նրան վանդակի դրսի կողմից:

- Ո՞վ ես դու, - հարցրեց մկնյակը:

- Համսիկն եմ, - կամաց պատասխանեց համստերը, բերանը չորացավ ու նա զգաց հերթական անհասկանալի հուզմունք հանդիպումից վայրի բնության հետ: - Պետք էր մնալ տանը, - միտք ծագեց համստերի գլխում, - պահվել Սոֆիի մահճակալի տակ ու ձայն չտալ: Վերջ, կորած եմ… ինձ կուտեն…Ռոզիկ ջան, իմացի՛ր, որ ես սիրել եմ քեզ, չնայած ոչ միշտ եմ ցույց տվել այդ:

- Իսկ ես Չլմփիկն եմ – սիրալիր պատասխանեծ էակը ու թաթիկը ձգեց վանդակի մեջ: - Արի՛ թաթերով բարևենք իրար:

- Հիմա նա կբռնի ինձ ու կտանի՛: Օ, ոչ, օ ոչ, ի՞նչ անեմ, - անցավ քար կտրած համստերի գլխով:

- Դե՛ - անհամբեր արտաասանեց մկնյակը ու թափահարեց թաթիկը:

- Բե՛, - պատասխանեց Համսիկը, դուրս հանեց լեզուն, փակեց աչքերը, ձգեց թաթիկները ու, ինչպես իրեն թվաց, շատ ստույգ սատկած ձևացավ:

Չլմփիկը սառեց տեղում դեպի առաջ ձգած թաթիկով ու զարմացած աչքը հառեց համստերին:

- Ի՞նչ ես ասում, - հարցրեց մկնյակը:

Համսիկը կարողացավ իր դերը խաղալ ևս մի քանի ակնթարթ, բայց շուտով լարված նյարդերը չդիմացան:

- Մի՛ կեր ինձ, - տնքաց նա, բացելով աչքերը:

- Հըմ, ոչ էլ ուզում էի, - զարմացած պատասխանեց Չլմփիկը:

- Այո՞, ազնվորե՞ն:

- Լիովին ազնիվ, - գլխով արեց մկնյակը:

- Դե պետք էր միանգամից ասել, թե չե սկսեց ծանոթանալ վախեցնելուց ու ահաբեկումից:

- Ճիշտ ես, …գլխով արեց լիովին խառնված Չլմփիկը:

- Ես Համսի՛կն եմ, համստեր, - հպարտորեն ներկայացավ համստերը, նույն ձևով պառկած փորիկով դեպի վեր:

- Իսկ ես Չլմփիկն եմ, մկնյակ: Իսկ դու ի՞նչ ես անում այստեղ:

- Երազում եմ պանրի մասին ու կարոտում եմ իմ իսկական տունը, խելացիորեն ու նշանակալի ձևով պատասխանեց համստերը:

- Իսկ, իսկ ես…

Չլմփիկը չհասցրեց վերջացնել խոսքը, որովհետև տղան իր խաղալիքը գտնելու հույսով շատ մոտիկ եկավ վանդակին:

- Ապրում եմ ու աշխատում եմ այստեղ, ընդհանրապես, բայց ժամանակն է: Կտեսնվե՛նք: - Չլմփիկը թաթով արեց ու անհետացավ մոտակա թփերի մեջ:

- Հուսամ՝ ոչ այսպիսի հանգամանքներում, - պատասխանեց համստերիկը, թաթով շոյելով թփթփացող սիրտը, ավելի լավ է հյուր արի:

Այնժամ տղան բացատով մեկ դեռ փնտրում էր իր մեքենան:

- Որդիս, - կանչեց մայրիկը Վիտյային: - Եթե չես կարողանում գտնել քո խաղալիքը, ապա ոչ մի վատ բան չի եղել, մյուս անգամ ավելի ուշադիր կլինես: Երեխաներ, նստեք մեքենա, թե չէ հիմա անձրև կսկսի:

Հայրիկը բացեց մեքենայի դռները ու ձեռքով հրավիրեց ընտանիքը նստելու, հետո ինքը նստեց ղեկի մոտ ու գործի դրեց շարժիչը: Երեխաներն ու մայրիկը նստեցին իրենց տեղերը ու փակեցին դռները: Մեքենան, բաց թողնելով ծխե ամպ, սլացավ դեպի քաղաք:

Հենց որ լռեց շարժիչի աղմուկը ու մեքենան չքվեց աչքից, բարձր խոտը շարժվեց, ու մկնյակը բարձրացավ մոտակա կոճղին, թաթիկը մոտեցրեց ճակատին ու ուշադիր նայեց հեռուն – սկզբից մի կողմը, հետո մյուսը: Մկնյակը կարիք չուներ թաթը դնել ճակատին ավելի լավ տեսնելու համար, նա առանց դրա էլ լավ էր տեսնում, պարզապես նա գիտեր այդ մարդկային շարժումը և հաճախ անում էր, նմանվելով մարդկանց:

Համոզվելով, որ մեքենան մարդկանցով գնաց ու իրեն ոչ ոք չի տեսնում, մկնյակը շվացրեց, ու խոտի միջից դուրս եկավ մի ուրիշ մկնյակ, առաջինին նման նարնջագույն շալվարիկով ու դեղին շապիկով: Երկրորդ մկնյակը մոտեցավ կոճղին ու հարցական նայեց վերև:

## *Գլուխ 2.* **Աղվանիկն ու Չլմփիկը**

Չլմփիկը ցած թռավ կոճղից, իսկ երկրորդ կենդանին զբաղեցրեց նրա տեղը ու նույն ձևով, տիրոջ պես, նայեց շուրջը:

- Աղվանիկ, մարդիք արդեն քշեցին գնացի՞ն իրենց շարժիչով սայլի վրա, նայելով ներքևից վերև իր ընկերոջը, հարցրեց Չլմփիկը:

- Ըհը, գնացին: Ու ես զարմանում եմ, ինչքանով անշնորհակա՛լ ու անսի՛րտ են մարդիք: Չէ որ մենք նրանց միշտ օգնում ենք, իսկ նրանք մեզ չե՛ն սիրում, - աղաղակեց Աղվանիկը ու սկսեց ուշիմ նայել խոտին ու թփերին: Մկնյակի թմբլիկ պոչիկը զայրույթից դողդողացնում էր:

- Մենք Կորցրած Գանձերի Մեծագո՛ւյն Փնտրողներ ու Հարստության Վերադարձնողներ ենք, Մկնյակների Հզոր Ցեղը, համագոյակցում ենք մարդկանց հետ արդեն շա՛տ-շատ տարիներ ու վերադարձնում ենք նրանց կորցրած հարստությունը, սակայն մարդիք շարունակում են համարել բոլորին, նրանց թվում և մեզ, նրանց բոլոր կորուստների, պակասորդների ու դժբախտ պատահարների պատճառը, - հպարտորեն հայտարարեց Աղվանիկը: Աղվանիկը կրթված ու կարդացած մկնյակ էր, նրա բառապաշարը շա՛տ հարուստ էր: Նա նույնիսկ ակնոց ուներ, որ գտել էր շատ վաղուց, իսկ բոլորը գիտեն, որ ակնոցը խելքի նշան է:

- Հենց որ մարդիք ինչ-որ բան են կորցնում, - շարունակեց Աղվանիկը, - միանգամից հայտարարում են, որ ինչ-որ մեկը այդ իրը գողացել է:

- Իսկ իրականում մարդիք, պարզապես, կորցուցիկ-մոռցուցիկներ են - գլխով արեց Չլմփիկը, թաթիկները ծալելով կրծքին:

- Հենց այդպե՛ս, - համաձայնվեց Աղվանիկը:

- Իջիր կռճղից, արի փնտրենք կորցրած իրերը: - Չլմփիկը հիշեցրեց ընկերոջը բացատ գալու նպատակի մասին: - Իսկ ովքե՞ր են թյունիկները, որոնց մասին խոսում էին մարդիք, - հանկարծ հիշեց նա:

- Չգիտեմ, երբեք չեմ լսել նրանց մասին, - ուսերը թոթվեց Աղվանիկը, մոտեցավ բարձր, խիտ թփերին ու, տնքալով, դուրս հրեց մեքենան, որը անարդյունք փնտրում էր տղան: Չլմփիկը զարմացած նայեց ընկերոջը:

Աղվանիկ, սա անհավատալի բան է: Ինչպե՞ս դու իմացար, որ մեքենան այս թփերում է, - զարմացավ Չլմփիկը:

- Ո՛չ..ես…է-է-է… - կմկմաց Աղվանիկը, պարզապես ես գիտեի, որ դա հենց այս թփերում է:

- Ի՛նչ է, դու ի՞նքդ ես բոթել այնտեղ, - կռահեց Չլմփիկը, չռեց աչքերը ու, սարսափած, սեղմեց թաթիկով բերանը:

- Այո՛: Այո, ես նա կամացուկ հրեցի թփերի մեջ, երբ տղան շուռ էր եկել, - վճռականորեն պատասխանեց Աղվանիկը: - Ես, պարզապես, չէի ուզում բոլոր գտած իրերը քարշ տալ մեջքիս վրա մինչև գյուղը, ճանապարհը մոտիկ չի: Իսկ այստեղ այսքա՛ն գեղեցիկ փոխադրամիջոց կա: Ու Աղվանիկը սիրով շոյեց խաղալիք մեքենան, որը բարձրությանբ հասնում էր նրա կրծքին: Նա արդեն կռահում էր, թե ինչպես մեքենայով ներս կսլանա գյուղ, ու մկնյակ-աղջիկները հիացած կնայեն նրա ետևից, հոգոց քաշելով ու պոչիկները շարժելով: Իսկ երեկոյան կարելի է որևէ սիրունիկի թափքի մեջ նստացնել, քշել դեպի գետակը, հիանալ արևմուտքով…Նա կհագնի մաշված բացկապույտ շալվարիկ ու գեղեցիկ կլինի:

- Ես կլինեմ աննմա՛ն, - երազկոտ շշնջաց Աղվանիկը:

- Բայց չե որ դա գողությո՛ւն է, – ներխուժեց նրա երազանքի մեջ Չլմփիկի ձայնը: Տոհմի Ավագները կարող են մեզ հեռացնել կորցրած իրերի որոնելու գործից, - ախ քաշեց ընկերը:

- Դե…ը-ը-ը…մենք, պարզապես, նրանց չենք ասի դրա մասին, - Աղվանիկը մեղավոր հոգոց քաշեց:

- Նա չի՛ ասի: Գերազա՛նց ծրագիր, - փնթփնթաց Չլմփիկը, շուռ եկավ ու վճռականորեն ուղղվեց հետազոտելու բացատը, որտեղ մինչ այդ հանգստանում էին մարդիք:

Աղվանիկը, գլխիկոր ու պոչիկը կախած, դանդաղ գնաց նրա ետևից: Բայց արդեն մի քանի րոպեից հետո, մոռանալով պատահածի մասին, ընկերները տարված հետազոտում էին բացատը ու գտած իրերը դարսում էին խաղալիք բեռնատար մեքենայի թափքի մեջ:

Նրանք գտան երեք տարբեր արժեքի մետաղադրամ, մի կրծքազարդ, թաշկինակ ու կոնֆետ: Բոլոր այդ իրերը դրվել էին մեքենայի մեջ, կոնֆետը անմնացորդ կերվել էր, իսկ փաթաթանը ավելացվել էր թափքի մեջ:

Հետո մկնյակները հրեցին մեքենան անտառի արահետը ու սլացան դեպի իրենց գյուղակը:

– Դըռ-դըռ-դըռ, - ասաց Աղվանիկը, աշխատող շարժիչի ձայնին նմանացնելով: Նրանք հարմարեցրին բեռնատարը բլուրի վրա, հրեցին, չդադարելով կրկնել դըռ-դըռ-դըռ, ու, ցատկելով թափքի մեջ, ճվճվոցով ու ուրախ ծվծվացնելով սլացան դեպի ցած: Մի քանի անգամ մեքենան ճանապարհից թեքվում, իջնում էր ակոսի մեջ ու մտնում թփերը, իսկ մի անգամ նույնիսկ շուռ եկավ, վախեցնելով ծեր ագռավին, որը ննջել էր, նստած ճյուղի վրա: Ուրախ քչքչոցով, վերապրելով ճանապահա-տրանսպորտային պատահարը առանց վիրավորվելու, ընկերները դրեցին մեքենան անիվների վրա ու շարունակեցին իրենց ճանապարհը դեպի գյուղը: Մի ժամից հետո նրանք արդեն տեղում էին:

## *Գլուխ 3.* Մկնյակների գյուղակը

Մանրիկ անտառային ժողովրդի գյուղակը գտնվում էր փոքր ձորակի մեջ ու պաշտպանված էր բոլոր կողմերից - անկոչ հյուրերից մեծ գլաքարերով, քամիներից՝ բլուրներով: Բնակավայրում կար մոտ հիթսուն փոքրիկ տնակ-գետնահյուղ, ընդամենը այնտեղ ապրում էր մոտ երկուհարյուր մկնյակ: Գյուղի նեղ անցատեղը պահպանում էին երկու-երեք հերթապահ, սակայն դա պետք էլ չէր՝ մարդիք գյուղը չէին գտնի, իսկ անտառի էակները ապրում էին համերաշխ կամ, պարզապես, գլուխ չէին դնում ռազմատենչ ու աղմկոտ մկնակների հետ:

- Դըռ…Դըռ…հոգնած մի կերպ արտասանեցին Չլմփիկն ու Աղվանիկը, դժվարությամբ ներս քաշելով մեքենան գյուղի մեջ: Նրանք հրում էին խաղալիք բեռնատարը վերջին կես ժամվա

ընթացքում, քանի որ ճանապարհը գյուղի մոտերքում շատ ոլոր-մոլոր էր ու ծուռումուռ, ու այդ իսկ պատճառով բոլորովին ուժասպառ էին եղել:

- Միտքդ դեռ չե՞ս փոխել մեքենավար լինել, - հեգնանքով հարցրեց ընկերոջը Չլմփիկը:

- Դըռ… համառորեն պատասխանեց Աղվանիկը, հրելով բեռնատարը քրտնած թաթիկներով:

- Դե հիմա ինքդ շարունակի, - Չլմփիկը թեթև խփեց ընկերոջ մեջքին ու անուժ ընկավ խոտի վրա:

- Դըռ-դըռ, - տնքաց Աղվանիկը ու շարունակեց հրել իր մեքենան կենտրոնական բացատի մոտ;

- Քշի-քշի, ճամփեքի տիրակալ, - ձեռքը թափահարեց պառկած Չլմփիկը նրա հետևից:

Աղվանիկը շարունակեց իր ճամփան դողացող թաթիկների վրա: Բոլորը նրան էին նայում կարեկցանքով, սակայն Աղվանիկն այնքա՜ն էր հոգնած, որ նույնիսկ չէր նկատում դա: Վերջապես, անհավատալի ջանքով հասցնելով մեքենան բացատի կենտրոնը, նա սողոսկեց թափքի մեջ, տարածեց թաթիկները տարբեր կողմերը, ներկայացնելով աստղ, ու քարացավ այդ դիրքում:

- Ի՞նչ ես բերել, - հարցրեց նրա կողքով անցնող մկնյակը բարձր սև ցիլինդր գլխին:

- Արժեքավոր իրեր, - մի կերպ արտասանեց Աղվանիկը: Նա արդեն քնում էր:

- Պարզ է: Իսկ մեքենան որտեղի՞ց ես վերցրել:

- Ինչ կա՞ որ, - անտարբեր պատասխանեց Աղվանիկը: Նա այնքա՜ն էր հոգնել, որ նույնիսկ չէր հասկանում, թե ինչ է ասում:

- Ա՜յ, տեսնում ես, ես միանգամից հասկացա, որ քեզ … կտանջի, - ասաց Չլմփիկը, որ անցնում էր նրա կողքով դեպի իր տնակը:

- Բիր՜, - կիսաքուն համաձայնվեց Աղվանիկը ու նույն պահին քնեց աստղի ձևով, խռխռացնելով ու փսփսացնելով:

Երբ առավոտյան հանգստացած Աղվանիկը դուրս եկավ իր տնակից, կենտրոնական բացատում ամբողջ ընթացքով պատրաստություններ էին գնում մկնյակների ժողովին:

- Մայրիկ, մայրի՛կ, իսկ ի՞նչ է լինելու ժողովում, - հետաքրքրությամբ հարցնում էր ինչ-որ փոքրիկ, որ քայլում էր իր մայրիկի կողքին դեպի բացատը:

- Աղվանիկը մեքենա է գողացել, նրան ամոթա՛նք են տալու, - գլուխը թոթվեց մայրիկը:

- Ա՜յ քեզ բան, մի՞թե այդքան խիստ, ծոծրակը քորեց Չլմփիկը, ուղղվելով դեպի բացատը:

Ահա արդեն մի ժամ է, որ մկնյակների գյուղի կենտրոնական բացատում, որը ժողովատեղի էր ծառայում, ավագները ու չզբաղված բնակիչները քննարկում էին Աղվանիկի բացասական վարքը: Բացատի կենտրոնում կանգնած էր չարաբաստիկ խաղալիք մեքենան, ու մեղադրյալ Աղվանիկը նստած էր թափքում ընկճված տեսքով ու թախծոտ հայացքով:

- Աղվանիկ, չե՞ս ամաչում, - խիստ արտասանեց սև պատմուճանով, երկար սպիտակ կեղծամով ու փայտե մուրճով թաթիկում մկնյակը, որը կատարում էր ժողովի նախագահի դերը: Նա թակեց մուրճիկով փոքր կոճղին:

- Աղվանիկի պաշտպանը հանձն առավ լինելու մկնյակ Ջումբոն: Նա ճանաչում է մեղադրյալին նրա ամբողջ կյանքի ընթացքում ու հավատացնում է, որ Աղվանիկը կարող է ուղղվել ու նրան կարդարացնեն: Այո, - շարունակեց նախագահը, նկատենք, որ սա նրա առաջին չմտածված ու վնասաբեր արարքը չի:

- Բիր՜, - գոռաց ինչ-որ մեկը ամբոխի միջից, - ժամանակն է նրան վերադաստիարակել:

- Աշխատանքային թերա՛պիայի, - ավելացրեց մյուս ձայնը:

- Թավալել փայտե խեժի ու սոճու փշերի մեջ, - առաջարկեց սև բեղերով մկնյակը: - Հետո մաքրել-լողացնել ու երկու շաբաթով ուղարկել հյուսիսային անտառը ցախ հավաքելու:

- Հանգստացե՛ք: Կարգի եկե՛ք: - Նախագահը թխկացրեց մուրճիկով կոճղին: Եվ այսպես, ես շարունակեմ: Մեղադրողը այսօր կլինի հարգարժան գերագույն տոհմավագ ու մեծահարգո մկնյաների թագավոր Ծլըմփը:

Լսվեց մի քանի հույլ ծափծփոց:

Ծլըմփ թագավորը մկնյակների տոհմավագների ամենամեծն էր: Համարվում էր, որ մկնյակները որոշում են ընդունում խմբով, այսինքն վերջին խոսքը ամենաբարձր գոռացողների, ճռչճղաններին ու ճչաններինն է, սակայն Մկնյակների Փառապանծ Տոհմը, ինչպես նրանք իրենց էին անվանում, այնուամենայնիվ անտառային թագավորություն էր – ձևականորեն բոլորի գլխում թագավոր Ծլըմփն էր: Ծլըմփն այնքա՛ն ծեր էր, որ նրա ղեկավարությունը սահմանափակվում էր աղավնիներին կերակրելով, հանդիսավոր կերպով թաթով թափահարելով շքերթների ժամանակ ու

կենածներ ասելով մկնյակների ընդհանուր տոնակատարությունների ժամանակ, որտեղ մի քանի մեղրով փրփրուն ըմպելիքի գավաթից հետո նա քնում էր, գլուխը թեքած որևէ մկնյակի ուսին, կամ հարմարավետ սեղմվելով նրա տաքուկ ու փափկամազ կողքին: Ծեր թագավորը վնասակար չէր ու իր ասածի պես արդար էր, այնպես որ նրան գյուղում սիրում էին ու պահպանում որպես հին ու դուրեկան ավանդույթ:

Այսօր ծերուկ Շըլմփը հանկարծակի զգաց ուժերի հորդում, երևի զգացվում էր առավոտյան մարզանքների ազդեցությունը, որով նա զբաղվում էր արդեն մի շաբաթ, ու առավոտվա սուրճից հրաժարվելը: Զգալով երիտասարդական ուժ ու անվեհեր ավյուն, Շըլմփը ցանկացավ մի քիչ զրուցել ու դատողություններ անել, այդ պատճառով, երբ իմացավ Աղվանիկի զայրացուցիչ վարքի մասին, որոշեց մեղադրող լինել ու խոստացավ բոլորին այսօր ցույց տալ արդարությունը և սովորեցնել տեղական օրենքները: Հիմա նա մկնյակների շրջանակում էր ու ժամանակ առ ժամանակ տեղից տեղ էր զնում, հենվելով ձեռնափայտին:

- Խոսքը տրվում է մեղադրող կողմին, - հայտարարեց նախագահը, խփելով մուրճիկը:

- Ես թո՛ւյլ չեմ տա, որպեսզի մարդիք մտածեն, որ մկնյակները գողեր են , - թափահարելով իր ձեռնափայտը, որին անվանում էր Գավազան, հանդիսավոր կերպով հայտարարեց Շըլմփը:

- Այո՛: Դու ճի՛շտ ես ասում, Շըլմփ: Ճի՛շտ, - համաձայնվեցին որոշ մկնյակներ:

- Մենք արդեն շատ դարեր ծառայում ենք մարդկանց, գտնում ու վերադարձնում ենք թանկարժեք իրերն ու գանձերը, այլ ոչ թե գողանում ենք, - շարունակեց թագավորը: Առանց այն էլ տխուր Աղվանիկը մեքենայի թափքում ավելի տխրեց այս բառերից:

- Մի խոսքով, իմ առաջարկն է՛ Աղվանիկին հեռացնել մի ամսով արժեքավոր իրերը որոնելուց, որպես մոլեռանդ կարգը խախտողի:

Մկնյակների ամբոխը դղրդաց, քննարկելով թագավորի առաջարկությունը:

- Խոսքը տրվում է պաշտպանին, - հայտարարեց ժողովի նախագահը, խփելով մուրճիկը:

- Աղվանիկը, իհարկե, մեղավոր է, - մեղմաձայն սկսեց Ջումբոն, շատ հմայիչ մկնյակը ու Աղվանիկի վաղեմի ընկերը: - Ու նա պետք է պատժվի, բայց ոչ այդքան խիստ: Չէ որ Աղվանիկը ինքն է խոստովանել իր զանցանքը, շատ-շատ զղջացել է ու խոստանում է էլ երբե՛ք այդպիսի բան չանել: Ճի՞շտ է, Աղվանիկ, - հարցրեց Ջումբոն:

Մեղավոր մկնյակը լռջորեն գլխով արեց ու շարունակում էր անել ամբողջ ժամանակ, մինչև մկնյակների համայնքը բարձրաձայն, աղմկելով ու առանց զիճելու քննարկում էր, թե ինչ որոշի: Մի մասը Շըլմփի կողմն էր, շատերը Ջումբոի կողմից էին:

- Հերիք է գլխով անես, շուտով գլուխդ կընկնի ուսերիցդ, - վերջապես կանգնեցրեց Աղվանիկի շարժումները նախագահը: Եվ այսպես, ի՞նչ որոշում ընդունեց Մկնյակների Մեծագույն Տոհմը:

- Թավալել փայտե խեժի ու փշերի մեջ - սկսեց իր խոսքը բեղավոր մկնյակը:

- Ապա հանգստացի՛ր, - նրան վրա տվեցին հարևանները:

Խմբից դուրս եկավ մի կլորիկ, կերած-խմած մկնյակ հաստլիկ մռութով, շարժեց թշիկները, օդ հավաքելով, ու բարձրաձայն հայտարարեց.

- Մկնյակների Մեծագույն Տոհմը որոշում ընդունեց Աղվանիկին հեռացնել թանկարժեք իրեր փնտրելուց մի շաբաթով ու երկու օրով:

- Ու թավալել փայտե խեժի մեջ, - նորից մեջ մտավ բեղավոր մկնյակը:

- Ձայնդ կտրի վերջապե՛ս, - փնթփնթացին նրա վրա շրջապատից:

- Այսպիսով, մի շաբաթ ու երկու օրով ազատում, - վճիռը ի մի բերեց նախագահը: Որոշումը կայացել է: Ժողովը ավարտված է: Բոլորին շնորհակալությո՛ւն, բոլորը ազատ են, - սև թիկնոցով մկնյակը խփեց մուրճիկով, մի կողմ դրեց ու հոգնած թափահարեց թաթիկը - մուրճիկը բավականին ծանր էր:

Բնակիչները սկսեցին ցրվել, քննարկելով վճիռը: Ամոթխած Աղվանիկը թամփքից ցած թռավ:

Ընկերները կարեկցանքով թեթև հպեցին Աղվանիկի ուսին, սակայն ի՛նչ արած, ինքը արժանացավ դրան: Տխուր մկնյակը քարշ տվեց թաթիկները գլխիկախ ու հուպ տված ականջներով: Մի քիչ ուշ նրանք Չլմփիկի հետ միասին հանձնեցին գտած թանկարժեք իրերը ավագներին և, ինչպես ամբողջ տոհմը, կարող էին հանգստանալ մինչև առավոտ:

Աղվանիկը ուղղվեց դեպի իր տնակը ու ծանր հոգոց էր քաշում ճանապարհին, հիշելով, ինչպես ոչ այնքան վաղուց նա արդեն նկատողություն էր ստացել զանցանքի համար, որի արդյունքում տառապեց Շըլմփ թագավորը, իսկ Աղվանիկին «Շուլբերտ» անունն կպցրեցին:

*Գլուխ 4.* **Երաժշտությունը ու Շուլբերտը**

Շուլբերտի պատմությունը այսպիսինն էր: Մի օր Աղվանիկն ու նրա ընկերները Ջումբոն ու Չլմփիկը ճանապարհորդում էին անտառում, փնտրելով կորած հարստությունը: Օրը արևոտ էր, կարծեմ, մարդկանց համար հանգստյան կամ նույնիսկ տոնական, այնպես որ գտնելիքը խոստանում էր մեծ լինել: Շատ շրջել պետք չեղավ, շուտով նրանք տեսան, ավելի շուտ լսեցին, հանգստացողների մեծ խումբ: Մկնյակները գնացին ձայների ուղղությամբ ու թաքնվեցին թփերում բացատի ծայրին, որտեղ աղմուկով ու ուրախ ժամանակ էին անցկացնում շապիտո թափառող կրկեսի դերասանները: Նրանք կատակում էին, ծիծաղում, պարում ու ինչ-որ բան էին տապակում խարույկի վրա: Չերևացող սարքից, որը մեքենայի բեռնախցիկի վրա էր, լսվում էին գեղեցիկ ու մեղեդայնային ձայներ, ու հանգստացողներից շատերը շարժվում էին երաժշտության տակ:

Ընկերները հարմարորեն նստեցին, երաժշտություն էին լսում ու հետաքրքրությամբ հետևում մարդկանց: Իսկ նայելու բան շատ կար: Աճպարարը զբաղեցնում էր աշխատակիցներին մեծ մագնիսի աշխատանքով ու կրակ էր առաջացնում հաստ խոշորացույցի օգնությամբ, կենտրոնացնելով որևէ մակերեսին արևի ճառագայթը: Ծաղրածուն փորձեր էր անցկացնում ռեակտիվների հետ, կարճ հարվածներ անելով, փոքր պայթյուններ ու առաջացնելով տարբեր գույների ծուխ: Ելույթավարը գեղեցիկ արտասանում էր գրքերից, իսկ ակրոբատը փչում էր կրակմարիչով, կազմակերպելով փրփրոտ երեկո:

Խումբը զվարճանում էր շատ երկար ժամանակ ու սկսեց տուն հավաքվել համարյա երեկոյան: Հանգստացողները շա՜տ էին հոգնել, արագ հավաքում էին իրերը ու շատ էին շտապում: Վերջապես մի քանի մեքենա, որ լիքն էին մարդկանցով, հեռացան բացատից, ահագին դառը ծուխ արձակելով, ու սլացան դեպի քաղաք:

Երբ ծուխն ու փոշին մեքենաներից ցրվեց ու նրանց շարժիչների աղմուկը հեռվում մարեց, ընկեր-մկնյակները տեսան, որ հանգստացողները մոռացել են բացատում ձայնապնակներով նվագարկիչը ու մագնիսներով, ռեակտիվներով, գրքերով ու կրակմարիչով արկղը: Մկնյակները մի քիչ խորհրդակցեցին ու որոշեցին տանել նվագարկիչը ու բոլոր մնացած իրերը գյուղ, չնայած նրան, որ դրանք բավականին ծանր էին: Երկար, տանջահար պատրաստություններից հետո, որ ներկայացնում էին իրենցից մերսումը, խարակ սարքելը, երկար տևող իրերի բարձելը, ու ոչ պակաս տանջահար ճանապարհից հետո ծանրագույն բեռը վերջապես հասավ գյուղակը (ի դեպ, հենց սրանից հետո Աղվանիկը սկսեց մտածել թափքով մեքենայի մասին, իսկ ինչպես դա վերջացավ նրա համար, մենք արդեն գիտենք): Իրերը դրված էին բացատի կենտրոնում: Ամբողջ մկնյակների ցեղը հավաքվել էր, որ տեսնի հրաշք-տեխնիկան: Վերջինը ժամանեց ծեր Շլըմփը:

Շլըմփի գլխին հնացած թագ էր, որը սարքված էր պահածոի բանկայից ու պինդ քաշված էր գագաթին: Ինչ-որ ժամանակ Շլըմփին թագադրել էին, ու այն ժամանակվանից նա այդպես էլ չկարողացավ հանել թագը, նա պինդ նստած էր գլխին, ինչպես նշանդրեքի մատանին հաստացած մատին: Սկզբում Շլըմփը չէր ուզում հանել թագը, իսկ հետո պարզապես մոռացավ, որ նա իր գլխին է:

Այն պատճառով, որ թագավորը միշտ իր թագով էր, շատ մկնյակներ արդեն սկսում էին մոռանալ, թե ինչպիսինն էր Շլըմփը առանց նրա: Որոշ չար լեզուներ պնդում էին, որ Շլըմփին հենց այդպես էլ կթաղեն իր թագով, իսկ նոր թագավորի համար նորը կպատրաստեն: Ուրիշ առավել չարախինդ լեզուները պնդում էին, որ Շլըմփը չի հանում թագը նույնիսկ քնելուց կամ լողանալուց: Իսկ մի մկնյակ համոզեցնում էր, որ տեսել է, երբ մի անգամ Շլըմփը հանեց թագը, նայեց հայելու մեջ… ու չճանաչեց իրեն:

- Բիը-գիը-քիը, - հազաց Շլըմփը ու իր ծուռումուռ փայտը ուղղեց երաժշտական սարքի կողմը: - Սա ի՞նչ հրա՛շք սարք է: Սա …ը-ը-ը…տրակտո՞ր է: Թե՞ քըմ…լամպ:

Թագավոր Շլըմփը թեև ծեր էր, բայց սիրում էր պարծենալ իր գիտական ու տեխնիկական գիտելիքներով ու ամեն գնով այդ գիտելիքները ցուցադրում էր, բայց ոչ միշտ ու հաճախ անտեղի:

Աղվանիկը, Ջումբոն ու Չլմփիկը իրար անցան նվագարկչի շուրջը:

- Հիմա մենք ձեզ ցույց կտանք հիանալի կրկեսային համար: Զտեսնվա՛ծ ներկայացում, - փորձ ունեցող համերգավարի ձայնով հայտարարեց Աղվանիկը: Նրա մեջքի ետևում հայտնվեցին

հեռու բոսոր ամպեր ու ինչ-որ տեղ տագնապահար ճչաց վախեցած թռչունը: Ծլըմփի սիրտը թռթռաց վատ նախազգացումից, բայց հետաքրքրությունը ավելի ուժեղ էր ինքնապահպանման բնազդից, ու ծերունի թագավորը որոշեց մնալ: Տոհմը, կասկածանքով նայելով սարքին ու վախվխած ժպտալով հրաշքի սպասումից, սկսեց զգուշորեն ծափահարել:

- Միացնում եմ, - բացականչեց Աղվանիկը ու սեղմեց կոճակը:

Ձայնարկիչը սկսեց պտտել ձայնապնակը, բարձրախոսից լսվեց սկզբում փշշոց, իսկ հետո ճրտճրթոց: Տոհմը, վեր ձգելով վզներն ու շունչը պահած, զննում էր հրաշք-սարքը: Ամենափոքրիկ մկնյակները բարձրացան մոտակայում աճող ցածլիկ ծառերի վրա ու կախվեցին ճյուղերից, ասես վայրի պտուղներ լինեին:

- Ինչ-որ ոչինչ չի երևում ու չի լսվում, - վատ լսողություն ունեցող Ծլըմփը մոտեցավ սարքին ու թաթը դրեց ականջին ինչ-որ բան լսելու նպատակով:

Հավանաբար, նա շատ մոտիկ գնաց մագնիսին, որ ձայնարկչի կողքին էր, ու ուժեղագույն մագնիսային դաշտը հանկարծ ձգեց թագը ու դրա հետ նաև Ծլըմփի գլուխը, բարձրախոսներից արտախուժած ուրախ երաժշտության հետ միաժամանակ:

Այս տեսարանը բավականին տարօրինակ էր – հենց նոր Ծլըմփը կար, ու Ծլըմփը չկա, ավելի ճիշտ նրա գլուխը, որը անզուսպ ձգվում էր դեպի մագնիսը թագի հետ միասին մեկ դեպի ցած, մեկ կողմ: Ուժ չունենալով պայքարելու ուժեղագույնի դեմ, հպատակների ապշած հայացքների ներքո, Ծլըմփը ամբողջ ուժով դիմադրում էր, փորձելով ուղիղ դիրք ընդունել: Կատաղի շարժելով աչքերը ու հևալով լարվածությունից ծեր թագավորը ճգնում էր դուրս գալ մագնիսի ազդեծության դաշտից: Սակայն հզոր ուժը բաց չէր թողնում, ու տոհմը հմայված նայում էր, թե ինչպես Ծլըմփը ձըգտում էր թաթերը, փորձելով ազատվել: Երաժշտությունը շարունակում էր բարձրաձայն հնչել, ու կողքից թվում էր, որ Ծլըմփը պարում է, թափահարելով իր փայտը, շարժելով մարմինը ու ժամանակ առ ժամանակ ցցելով պոչիկը, նույն ժամանակ թաթիկներով փորփրելով հողը երաժշտությանը համապատասխան:

- Կարծես ծերուկը որոշել է ջիգա պարել, - մեկնաբանեց ինչ-որ մեկը ու զոհ ծափահարեց:

- Պտտվի՛ր, ծերուկ: Թագավորները միշտ ջահել են, - գոռացին երիտասարդ մկնյակները, հպարտանալով իրենց ավագի թափով: Ինչ-որ մի պահ Ծլըմփի մկանները չդիմացան ու ծերուկին ուժգին ձգեց դեպի մագնիսը:

Մի քանի կենդանի հասկացան, որ Ծլըմփի հետ ինչ-որ վատ բան է կատարվում ու ամենահամարձակները ընթացան դեպի թագավորը: Ուրախ սիրո բալլադի ձայների ներքո ավագին կապկպեցին պարանով ու մի կերպ պոկեցին մագնիսից:

Ջումբոն ու Չլմփիկը վեր թռան ձայնարկչի վրա անջատելու նպատակով, բայց պտտվող ձայնապնակը բռնացրեց ու սկսեց պտտել նրանց: Ձայնի լծակի թևից խուսափելու նպատակով Ջումբոն ու Չլմփիկը սկսեցին թռիչքներ կատարել նրա վրայով, ինչպես մրցավազքի ձիերը խոչընդոտի վրայով: Վերջապես Չլմփիկին հաջողվեց անջատել սարքը, ու ձայնապնակը, արձակելով վերջին ակորդները, կանգ առավ:

Ծլըմփը տնքալով վեր կացավ և ուժասպառ հանելով լեզուն մատով ցուցանեց Աղվանիկին:

- Դու…հը-ը-ը-ը…Ի՞նչ էր անունդ…հը-ը-ը-ը…Ծուլբերտ, - չէր կարողանում շունչը քաշել Ծլըմփը ու զրգռված անվանեց Աղվանիկին հայտնի երաժշտահանի ազգանունին նման բառով:

- Էլ ոչ մի շռու, Ծուլբերտ, - վերջապես արտաշնչեց Ծլըմփը, սպառնաց իր փայտով ու , հոգնած, ոտքերը քաշ տալով, ուղղվեց դեպի իր տնակը:

Տոհմը ճանապարհեց Ծլըմփին կարեկցող հայացքով: Այդ օրվանից մկնյակների հիշողության մեջ ընդմիշտ տպավորվեց վայրի պարը, որը կատարեց նրանց ավագը, իսկ Աղվանիկին պինդ կպավ այդ հրաշք «Ծուլբերտ» մականունը:

### *Գլուխ* 5. Համսիկի փրկությունը

Սկսվեց Համսիկի իրերը փնտրելուց ազատելու շաբաթը: Մկնյակը շատ էր տխրում ու անգործ էր: Չլմփիկն ու Ջումբոն հաճախ էին նրան հյուր գալիս, որպեսզի նրանց ընկերը այդքան դարդ չանի: Մի անգամ (հենց առաջին օրը) այդ հանդիպումների ժամանակ, խոսք գնաց Սոֆիայի տնային համստեր Համսիկի մասին:

Նա շա՜տ ընկերական էր, - պատմեց Չլմփիկը, - բայց մի քիչ տարօրինակ: Մեկ էլ նա ինձ հյուր կանչեց ու ասաց, որ կարոտում է իր իսկական տունը: Հետաքրքիր է, թե ի՛նչ նկատի ուներ:

- Իհարկե անտառը, - հաստատորեն հայտարարեց Աղվանիկը, - չէ որ նա կենդանի է:

– Կենդանի՛ - համաձայն գլխով արեցին Չլմփիկն ու Ջումբոն:

- Իսկ որտե՞ղ են ապրում կենդանիները, շարունակեց իր դատողությունը Աղվանիկը:

- Որտե՞ղ, - հարցրեցին ընկերները:

- Անտառում:

- Հենց այդպե՛ս, Աղվանիկ, - համաձայնվեցին մնացած մկնյակները: - Դու փայլում ես քո խելքով ու գիտելիքներով, ինչպե՛ս միշտ:

- Ու դու ասում ես, որ նրան պահում են վանդակո՞ւմ, - հարցրեց Չլմփիկին գովեստից գոհացած Աղվանիկը:

- Հենց այդպե՛ս: Ու ստիպում են վազել անիվի մեջ: Ջեռ ե՞ն առնում:

- Ուրեմն նա պատանդ է, ու դեռ նրան ծաղրում են: Պետք է ազատե՛լ համստերին բանտարկությունից: Նա արժանի է ազատությանը, - ոգևորվեց Աղվանիկը:

- Ազատությո՛ւն, - ձայնակցեցին նրան ոգևորված ընկերները ու պատրաստվեցին ազատագրական արշավի: Հավաքելով անհրաժեշտ հանդերձանքը, ընկերները վերադարձան բացատ, որտեղ երեկ կայացել էր հանդիպումը Համսիկի հետ: Մի փոքր կանգ առան գետի մոտ, այն տեղում, որտեղ վանդակն էր դրված: Հոտ առնելով իր զգայուն քթիկով, Չլմփիկը ըմբռնեց նուրբ, բայց դեռ օդում ներկա համստերի հոտը, ու դրան հետևելով խումբը դանդաղ քայլերով շարժվեց դեպի քաղաք: Մի քանի անգամ հետքը կորում էր, բայց Չլմփիկը միշտ գտնում էր նորից, ու այն ժամանակ, երբ երկնքում վառվեցին առաջին աստղերը, ընկերները հասան քաղաք: Օդում հայտնվեցին շատ նոր ու անծանոթ հոտեր, բայց Համսիկի հետքը դարձավ ավելի բացահայտ:

- Ի՛մ ետևից, - հաստատ ձայնով Չլմփիկը առաջ տարավ իր ընկերներին: Նրանք սև շորտիկներ հագան ու գուտալինով գծեր նկարեցին մռութիկներին, որպեսզի միաձուլվեն գիշերվա մթության հետ: Անձայն ու ճարպկորեն նրանք շարժվում էին մթության մեջ, պաղկվելով ջրթափ խողովակներում ու ընտրելով դատարկ նրբանցքներ: Վերջապես մկնյակները հասան մի դուրեկան երկհարկանի տանը:

- Այստեղ, ցույց տվեց թաթիկով Չլմփիկը, նշելով երկրորդ հարկի բաց պատուհանը:

- Ազատությո՛ւն, - սկսեց գոռալ Ջումբոն, բայց Աղվանիկը ժամանակին հասցրեց փակել նրա բերանը իր թաթիկով:

- Ի՞նչ ես անում: Չէ որ մենք դարանում ենք, սա գաղտնի ազատագրական առաքելություն է:

- Օյ, ներեցե՛ք, - ամոթխած պատասխանեց Ջումբոն:

Գաղտնի եռյակը մոտեցավ տանը:

Մկնյակները արձակեցին պարանները նրանց ամրացրած կեռերով ու կպցրեցին երկրորդ հարկի պատուհանի գոգին: Նրանք ճարպկորեն ու արագ բարձրացան հաստ պարանների վրայով ու մտան պատուհանից ներս: Լուսնի լույսի տակ ընկերները տեսան մեծ վանդակ, որտեղ ուրիշ իրերի հետ միասին մի փոքր մահճակալ կար, որի վրա քաղցր քնած էր համստերը: Սենյակի մյուս կողմում և մի վանդակ կար թութակով, իսկ պատի մոտ մեծ ակվարիում՝ ձկներով: Թութակը շիվարած նայեց հյուրերին: Ջումբոն մոտեցրեց մատը բերանին:

-Սո՛ւս, ծիտիկ: Մի՛ վախեցիր, մենք քեզ էլ կփրկենք:

Երկու մկնյակ իջան պարանի վրայով պատուհանի գոգից սենյակ, Աղվանիկն ու Չլմփիկը բացեցին Համսիկի վանդակը ու կամաց տեղափոխեցին համստերին իրենց հետ վերցրած ծածկոցի վրա: Երբ ընկերները սկսեցին նրան բարձրացնել պարանների վրայով բաց պատուհանի մոտ, ինչ-որ մեկը լույս միացրեց դռան ետևում, ու լսվեցին քայլեր:

Ընկերները արագացրեցին: Շուտ-շուտ բռնելով պարանից Ջումբոն ընդունեց բեռը պատուհանի գոգին ու բավականին կոպիտ շրմփացրեց համստերով փաթեթը իր կողքին:

- Բրինզա, - փնթփնթաց երազում Համսիկը ու, քաղցր հորանջելով, շուռ եկավ մյուս կողքին:

Աղվանիկն ու Չլմփիկը արդեն պատուհանի գոգին էին, իսկ քայլերը դռան ետևում ավելի հստակ լսվեցին:

- Մենք կվերադառնանք քո ետևից, ծիտիկ: Ու ձեր ետևից, բանտարկված ձկնե՛ր, - հույս տվեց «բանտարկյալներին» Ջումբոն, ու, թաթիկը բռունցք հավաքած, բացականչեց - Ազատությո՛ւն:

Այս բառերով մկնյակները նետեցին թոզերով կապկպած փաթեթը, որի մեջ Համսիկն էր, պատուհանից ցած ու թռան նրա ետևից:
- Ազատությո՛ւն, - շիվարած գլուխ անելով, պատասխանեց թութակ Ռոզիկը: Ձկները ակվարիումի մեջ չգտան ոչ մի խոսք ու զարմացած լռում էին:
Ընկնող փաթեթը համստերի հետ կանգ առավ գետնից մազաչափ, կախվելով պարաններից ու տարուբեր լինելով: Մկնյակները ճարպկորեն իջան, հավաքեցին պարանները ու քարշ տվեցին ծածկոցը իրենց ետևից: Նրանք չէին ուզում արթնացնել Համսիկին ժամանակից շուտ ու պլանավորում էին նրան ուշքի բերել միայն անտառում, այդպիսով դուրեկան ակնկալիք անելով կենդանուն - քնել էր բանտարկված, իսկ արթնացավ իր իսկական տան մեջ:
Լուսնի լույսի տակ նրանք հասան անտառի եզրը: Արթնացնելով համստերին ընկերները պատրաստվեցին հայտնել նրան երկար սպասված ազատության մասին:
- Արթնացի՛ր, ընկեր - Աղվանիկը թեթև քաշեց համստերի ուսից:
- Դու ազատության մեջ ես, - հայտարարեց Չլմփիկը, հպարտ իրենով ու իր արած գործով:
- Ազատությո՛ւն, - ամբողջ սրտով գոռաց Ջումբոն ու վեր թռավ ուրախությունից:
- Հը՞, - քնաթաթախ հարցրեց Համսիկը, տրորելով աչքերը, - ի՞նչ:
Համսիկը ձգվեց, հորանջեց, տեսավ մկնյակներին, նայեց շուրջը ու զարմանքից չռեց աչքերը:
- Ո՞ւր եմ ես: Դուք ո՞վ եք: Ո՞ւր է իմ վանդակը, - ռռնաց համստերը:
- Մի՛ հուզվիր, մենք քեզ փրկեցինք դժբախտությունից, - սկսեց նրան հանգստացնել Աղվանիկը:
- Հիմա դու վտանգից հեռու ես, - ավելացրեց Չլմփիկը:
- Վազի՛ր, ընկեր: Դու ազատ ես ինչպես քամին դաշտում, հանդիսավոր կերպով հայտարարեց Ջումբոն ու թաթիկով ցույց տվեց անտառի անանցելի մթության կողմը: Հեռվում լսվեց գայլի տխրագին ոռնոցը:
- Վազե՞լ, - նորից հարցրեց Համսիկը: - Ո՞ւ ր վազել, ինչո՞ւ վազել:
«Նրանք կտանեն ինձ անտառ ու կուտեն, - անցավ Համսիկի գլխով: - Բարո՛վ մնաս, Ռոզիկ ջան: Բայց առանց կռվելու ես չե՛մ հանձնվի, ինձ հենց այնպես չե՛ք բռնի» - հերոսաբար մտածեց համստերը:
- Վազիր անտառ, քո իսկական տունը, - կրկնեց Չլմփիկը բարյակացորեն: - Չէ որ դու ինքդ էիր ասում, որ կարոտում ես քո տունը: Հիշո՞ւմ ես, բացատում գետի մոտ: Ես մկնյակ Չլմփիկն եմ, հիմա հիշեցի՞ր:
- Օ՛ֆ-օ՛ֆ-օ՛ֆ, - տնքաց Համսիկը, բռնելով իր մռութիկը, - իմ իսկական տունը բնակարանում է: Այն ժամանակ հենց դրան էլ կարոտում էի:
- Իսկ մենք կարծում էինք՝ դու բանտարկված ես, - զարմացավ Աղվանիկը: - Որոշեցինք, որ անտառում դու պաշտպանված կլինես:
- Պաշտպանվա՞ծ: Գիշերո՛վ անտառի մե՞ջ: Չէ որ ինձ վայրի կենդանիները կխժռեն: Ինձանից նույնիսկ շորտերիս ուսակապը չի մնա, - բուռն կերպով ծղրտաց համստերը:
Համսիկի մոտ սկսվեց այն, ինչ մարդիք հաճախ անվանում են հիստերիա կամ խուչապի գրոհ: Մկնյակները ամեն ձև սկսեցին նրան հանգստացնել, ու դրա վրա, հավատացեք, ահագին ուժ ծախսվեց:
Վերջն ի վերջո ընկերներին հաջողվեց հանգստացնել Համսիկին, ու նա պատմեց իր մասին:
Համսիկին դեռ փոքրուց ընտելացրեցին մարդիք, ու ինչքան նա կարող էր հիշել, կյանքն անցնում էր վանդակում: Սոֆին, որ հոգ էր տանում Համսիկի համար, շատ բարի աղջիկ էր ու հաճախ համեղ ուտելիքներով երես էր տալիս նրան: Համսիկի հետ մի սենյակում ապրում էին նաև թութակ Ռոզիկը, որին նա շատ էր սիրում, ու սուսիկ-փուսիկ ձկները ակվարիումի մեջ: Համսիկը շատ գոհ էր իր կյանքից ու բոլորովին չէր ուզում փոխել այն վայրի ու խիստ անտառային կենդանու ճակատագրին:
- Ընկերներ, ես շատ եմ գնահատում ձեր հոգատար վերաբերմունքը իմ նկատմամբ, բայց աղաչո՛ւմ եմ՝ վերադարձրեք ինձ տուն: Իմ տանտերերը դեռ քնած են, ու եթե մինչ առավոտ ես հայտնվեմ իմ վանդակում, ոչ ոք չի նկատի իմ բացակայությունը, - խնդրեց Համսիկը իր նոր ձեռք բերած ընկերներին:
Ծանր հոգոց քաշելով ընկերները դանդաղ քայլերով Համսիկի հետ ետ գնացին քաղաք ու կեսգիշերվա մոտ նորից տեղում էին:

Նորից զրնգացին մետաղե կեռերը պատուհանի գոգին, կրկին Աղվանիկն ու Չմփիկը բարձրացան երկրորդ հարկ, իսկ ներքևում մնացած Ջումբոն պարան կապկպեց Համսիկի հաստլիկ փորի շուրջը, ու մկնյակները սկսեցին բարձրացնել նրան: Ինքը, համստերը, չափազանց հարմարավետ, առանց ֆիզիկական ծանրաբեռնության կյանքի հետևանքով պարանի վրայով մագլցել չէր կարող: Համսիկին ճարպկորեն քաշեցին վերև ու տարան նրա վանդակի մոտ:

Ռոզիկ թութակը դիմավորեց նրանց հանդարտ հայացքով, այս գիշեր նրան էլ ոչինչ չէր զարմացնում:

- Ների՛ր մեզ, Համսիկ: Ների՛ր մեզ, ծիտիկ, - չկայացած փրկության պատճառով անտրամադիր, տխուր ձայնով ասաց Չմփիկը:

- Այո, Համսիկ, մենք շտապեցինք մեր եզրակացություններով, կարծում էինք՝ այստեղ վատ է քո համար, - գլուխը կախ համաձայնվեց Աղվանիկը:

- Կարծում էինք՝ դու բանտարկված ես, ուզեցինք քեզ ազատություն նվիրել, - ավելացրեց Ջումբոն:

- Բարեկամներ, դուք միայն տեսեք, թե ես ինչպե՛ս եմ ապրում: Մի՞թե հնարավոր է չուրախանալ սրա համար, - բացականչեց Համսիկը ու վառեց փոքրիկ լամպը վանդակում:

Աղվանիկը, Ջումբոն ու Չմփիկը տեղում քարացան չտեսնված շքեղությունից՝ Համսիկի բնակարանը ամենահարմարավետն էր, որի մասին կարելի էր միայն երազել:

Վանդակում բացի հատակին փռած գորգից կար փոքրիկ բազմոց, բազկաթոռ, պահարան, հայելի, լվացարան, վազքի սարք ու նույնիսկ ծաղիկներ փոքրիկ ծաղկամաններում: Պատերին կախված էին բնանկարներ, ու ամբողջ վանդակը հիշեցնում էր մի փոքր, հարմարավետ բնակարան: Աղվանիկը, Ջումբոն ու Չմփիկը հիացած ա՛խ քաշեցին՝ իհարկե, Համսիկը չէր ուզենա փոխել այսպիսի կյանքը անտառի, վայրի կյանքին:

- Իմ կյանքում կա ամեն ինչ, - ասաց Համսիկը: Ու մի փոքր լռելուց հետո հոգոց քաշեց, - բացի իմ առաջին սեր Բուսիկից:

Համսիկը ևս մեկ անգամ հոգոց քաշեց ու ցույց տվեց ընկերներին սիրունիկ շրջազգեստով համստերի լուսանկարը ինքնաասարք թևերով մեջքի ետևում:

- Մի օր Բուսիկը ինքնաթիռ տեսավ, որի վրա գրված էր «Airbus», ու որոշեց, որ նա էլ է ԷըրԲուս, պատրաստեց թևեր, ու այդ ժամանակից մենք նրան չենք տեսել… - տխուր ավարտեց Համսիկը ու ցույց տվեց պատի պլակատին, որի վրա պատկերված էր գեղեցիկ սպիտակ ինքնաթիռ վառ կարմիր մակագրությունով Airbus.

Նրանք մի քիչ նստեցին բազմոցին, հանգստացան, բայց ժամանակն էր անտառ վերադառնալու: Մկնյակները հրաժեշտ տվեցին ու արդեն ուզում էին նորից դուրս թռնել պատուհանից, երբ Համսիկը կանգնեցրեց նրանց:

- Ես երախտապա՛րտ եմ ձեզ, որ անհանգստացել եք իմ անձի համար, ու չեմ ուզում, որ գնաք տխուր տրամադրությամբ: Իմ անտառային եղբայրներ, ես որոշել եմ ցուցադրել ձեզ հրաժեշտի կրկեսային ներկայացում, - հայտարարեց Համսիկը:

- Ծո՞ու, - զգուշացած հետաքրքրվեց Համսիկը:

- Բի՛, շոու, - ուրախ գլխով արեց համստերը, շարժելով թշիկները:

- Վերջին շոուն, որ մենք տեսել ենք, վերջացավ…բավականին ոչ միանշան, - կասկածանքով ասաց Ջումբոն:

- Ո՛չ, մի՛ անհանգստացեք, ամեն ինչ լավ կլինի, - համոզեց նրանց Համսիկը:

Համսիկը հանեց պահարանից սուրծայր թասակ ու աստղերով թիկնոց, զգեստափոխվեց, իսկ հետո միացրեց փոքրիկ գրամոֆոնը: Լսվեցին երաժշտության ձայներ:

Ա՛պ, - բացականչեց Համսիկը, ինչպես հմուտ կրկեսային կենդանիների սանձիչ:

Այս բառերը լսելով Ռոզիկը հանեց իր թաթիկը վանդակից, բացեց դռան կողպեքը, դուրս թռավ ու նստեց ձողիկի վրա համստերի կողքին:

- Ա՛պ, - նորից հրաման տվեց Համսիկը: Ու թութակը թռավ մյուս ձողիկի վրա:

- Ա՛պ, - ու Ռոզիկը սալտո արեց:

- Համսիկը նորից «Ապ» արտասանեց, ու ձկնիկները, շուռ գալով օդում, դուրս թռան ակվարիումից ու նորից սուզվեցին ջրի մեջ:

Դա այնքա՛ն լավ էր, որ Համսը, Ջումբոն ու Չլմփիկը սկսեցին ուրախ ծիծաղել ու բարձր ծափահարել, մոռանալով համստերին փրկելու չկայացած փորձի մասին:

Առանձնապես ընկերները ծիծաղում էին այն ֆոկուսից, որի ժամանակ Համսիկը գրպանն էր դնում մի գնդիկ ու մի թեթև վզակոթին խփելուց հետո հանում էր այդ գնդիկը իր բերանից: Ու դեռ երկար ժամանակ Համսիկը ցուցադրում էր տարբեր համարներ, զբաղեցնելով մկնյակներին, իսկ երբ հրաժեշտի ժամանակն եկավ, անտառի բնակիչները չէին ուզում գնալ՝ այնքան հավանել էին Համսիկի ելույթը: Սակայն ոչինչ չես անի, ժամանակն էր վերադառնալու տուն: Համսիկը գրկեց իր նոր ընկերներին ու մաղթեց նրանց ամենալավը: Աղվանիկը, Ջումբոն ու Չլմփիկը ևս մեկ անգամ հրավիրեցին Համսիկին հյուրընկալել իրենց ու գծեցին գյուղի ճանապարհի քարտեզը: Հրաժեշտ տալով ու կրկին հայտնվելով անտառի եզրին, մկնյակները որոշեցին, որ չկայացած փրկելու փորձը արժեր կրկեսային հանդեսի: Ու դեռ երկար ժամանակ սրանից հետո մկնյակները զվարճացնում էին իրենց տոհմի ընկերներին տարբեր կրկեսային հնարքներով, որ տեսել էին Համսիկի մոտ: Մի ամգամ հնարքներից մեկի ընթացքում Չլմփիկը կուլ տվեց գնդակը, ու բոլորը սարսափելի վախեցան: Այդ դեպքից հետո մկնյակները հետևություններ արեցին ու հիմա աշխատում են օտար առարկաներ հնարավորին չափ քիչ դնել բերանները:

***Գլուխ 6.* Մկնյակների գանձերը**

Դա ծանր, երկար, բայց հաջողված օր էր մկնյակ-որոնողների համար: Չլմփիկը, Աղվանիկն ու Ջումբոն վեր կացան վաղ առավոտյան ու շրջում էին անտառում, հավաքելով ամեն տեղ մարդկանց կորցրած իրերը, մինչև այն պահը, երբ հեռվում երկինքը ներկվեց նարնջագույն զոլերով, իսկ արևի հսկա գունդը սկսեց դանդաղ վար լողալ բարձր ծառերի ետևը դեպի արևմուտք:

Ուսապարկերը մինչև կապը լցված էին գտած իրերով:

- Գյո՞ւղ, - հարցրեց Ջումբոն, մաքրելով քրտնած թաթիկով ոչ պակաս խոնավ բուրդը գլխի վրա:

- Բա ո՛նց, - պատասխանեց Չլմփիկը, - շորտերը չորացնենք:

Ընկերների եռյակը թեքվեց մկնյակների ավանի կողմը ու թփթփացրեց ճիշտ արահետի կողմը, թողնելով թաթերի հետքերը խիտ խոտերի մեջ: Տեղ հասան քառորդ ժամում: Անցնելով պահակների կողքով ու քայլելով կենտրոնական փողոցով, ընկերները հասան Շլըմփի տնակին: Առաջնորդը նստած էր առմուտքում ծածկաշալով փաթաթված, ջերմաչափը թևի տակ, ու ինչ-որ ծխացող հեղուկ էր խմում բաժակից: Ավագի տեսքը լավ չէր:

- Ո՞ւմ հանձնենք արժեքավոր իրերը, առաջնորդ, - հետաքրքրվեց Չլմփիկը, բարձրանալով առմուտքը ու վեր գցելով տոպրակը ուսերից:

- Վա՛յ, եկե՛ք այսօր ինքներդ, տղերք ջան, տարեք բոլոր գանձերը «լոմբարդ» պահեստը, ես ինչ-որ վատ եմ ինձ զգում, - խռպոտ ձայնով պատասխանեց Շլըմփը: Գանձապահ-ավագները կպասեն, նրանք առավոտվանից գործի տեղում են:

Գանձերի պահեստը մկնյակները կոչում էին տարօրինակ բառով «լոմբարդ». Մկնյակները գիտեին, որ մարդիք քաղաքներում շատ հաճախ իրենց թանկարժեք իրերը տանում են լոմբարդ, ու կարծում էին, որ դա ամենավստահելի պահոցն է: Մարդկանց նմանությամբ անտառի արարածները տվեցին այդ անունը մեծ քարայրին հողի տակ: Տեղացի գանձապահներին պահոցում բոլորը գիտեին իրենց մականուններով ՝ Փող-Մող ու Գանձ-տանձ, որովհետև նրանք սիրում էին կրկնել այս բառերը տեղին-անտեղին: Նրանք Շլըմփի պես ծեր էին ու իմաստուն ու շատ պարտաճանաչ էին վերաբերվում իրենց աշխատանքին, ինչում մենք շատ շուտով կկարողանանք համոզվել:

Մկնյակները հեռացան Շլըմփի տնից, մաղթելով, որ նա շուտ լավանա, ու ուղղվեցին դեպի քարանձավը, որտեղ պահվում էին մկնյակների գանձերը: Քարայրի մուտքը բարձր թմբի մեջ էր, որը պաշտպանում էր մկնյակների գյուղը հյուսիսային քամիներից: Ընկերները բարևեցին մկնյակ-պահնորդներին մուտքի մոտ ու քայլեցին երկար, ծուռումուռ միջանցքով, որը գնում էր գետնի տակ: Միջանցքը տանում էր բարձր ու լայն դահլիճ:

Դահլիճում, հենց պատի մոտ, դրված էր մի սեղան, հաստ գրքերը վրան դարսած, որի շուրջը նստած էին երկու տարեց մկնյակ: Մեկը ցածրահասակ էր ու թմբլիկ, երկրորդը՝ բարձրահասակ ու նիհար, գեղեցիկ այտամորուքով: Երկուսն էլ ակնոցով էին:

- Ավագներին ողջո՛ւյն, - բարևեցին մկնյակները:

- Ողջո՛ւյն, ջահել որսարարներ, բերեցի՞ք փող-մող, մատանի-պատանի, ականջօղ-փականջօղ, - սիրալիր բարևեց բարձրահասակ Փող-Մողը:

- Բարև ձեզ, - չպոկելով հայացքը հաշվեգրքերից, գլխով արեց թմբլիկ Գանձ-Տանձը: - Ի՞նչ եք բերել:

- Շատ բան, - զոհ պատասխանեց Աղվանիկը, ու ընկերները սկսեցին դատարկել քարայրի հատակի վրա բերած արժեքավոր իրերը:

- Այսպե՛ս, կտեսնենք, հաշվի կառնենք, կգնահատենք, կդասավորենք, - Գանձ-Տանձը վերցրեց սեղանի վրայից խոշորացույցը ու սկսեց պահանջկոտ զննել ավարը:

–Կարտոնե տուփ, մի հատ: Արծաթե շղթա, պոկված, մի հատ: Թերթ «Երկաթգծային լրաբեր», ճմրթված, մի հատ: Մետաղե կրծքազարդ, մի հատ: Շոկոլադ փափեթված, կծած է երկու անգամ, տարբեր կողմերից, մի հատ: Գանձ-Տանձը թվարկում էր գտած իրերը:

- Ինչպե՞ս թե կծած, - ճչացին Ջումբոն ու Չլմփիկը:

- Հենց այսպե՛ս: Կծած է, ընդ որում ատամների հետքից երևում է, որ մի ատամը վնասված է, - հանգիստ պատասխանեց Գանձ-Տանձը:

Ջումբոն ու Չլմփիկը նայեցին Աղվանիկին, չէ որ նրա ատամն էր վնասված, ավելի շուտ՝ ատամի մի մասը ջարդված էր:

- Դե, պարզապես, շոկոլադը ընկույզով ու չամիչով այնքա՛ն համեղիկ է… - սկսեց նվնվալ Աղվանիկը:

Ջումբոն ու Չլմփիկը քայլեցին դեպի Աղվանիկը նրա վզակոթին տալու նպատակով, բայց Աղվանիկը նկատեց մի փոքրիկ զաղտնի դուռ ու սկսեց ետ գնալ, ջանալով պրծնել դատաստանից: Դուռը հին էր, լքված ու թվում էր խորհրդավոր:

Ավագները Աղվանիկի այդ շարժումը նկատեցին չափազանց ուշ:

- Կա՛նգ առեք, հենց այդտե՛ղ, - գոռաց Գանձ-Տանձը:

Իսկ Փող-Մողը միայն նայում էր համր սարսափով, ձեռքից վար գցելով խոշորացույցը:

- Հը՞, ինչ ասացի՞ք, - Աղվանիկը շուռ եկավ ձայնի վրա, բայց այդ ժամանակ Ջումբոն ու Չլմփիկը, իրար առաջ ընկնելով, սայթաքեցին, ընկան Աղվանիկի վրա, ու ամբողջ եռյակը վար ընկավ անցքի մեջ: Դուռը նրանց ետևից փակվեց, ու նրանք հայտնվեցին մթության մեջ:

- Ախր այնտեղ լքված լաբիրինթո՛ս է, - շարունակում էր գոռալ Փող-Մողը, սակայն դրանից արդեն օգուտ չկար՝ դուռը ընկերներին կտրեց արտաքին աշխարհից:

Մթության մեջ մկնյակները մի քանի քայլ արեցին առաջ, հետո ետ, բայց դռնակը գտնել չկարողացան, ինչքան որ չէին շոշափում գետնատակի պատերը:

- Ի՞նչ ենք անելու, - կամաց հարցրեց Չլմփիկը: Նա ակնհայտորեն վախեցել էր:

- Այնտեղ ինչ-որ բան է լուսավորվում, գնացինք դեպի լույսը: Ահա և կիմանանք, - պատասխանեց Աղվանիկը:

Ընկերները մթության մեջ սկսեցին քայլել լաբիրինթոսով, դեմ առնելով սարդոստայնին, որ մեծ քանակությամբ կախված էր ամենուրեք: Թքելով ու ձեռքերով քշելով սարդոստայնը մկնյակները հա աղաղակում էին ու հառաչում:

- Բայց պատկերացրեք, - մտամոլոր արտասանեց Ջումբոն, - եթե հանկարծ այստեղ ապրում են հսկայական սարդեր, օձեր ու չղջիկներ: Թունավորված…

- Չղջիկները չեն լինում թունավորված, - հակառակվեց Աղվանիկը:

- Այ նա կթռնի քո գլխին, այն ժամանակ էլ կիմանանք, չարագուժորեն պատասխանեց Ջումբոն:

- Վա-ա-ա-այ, միաձայն գոռացին մկնյակները ու արագ վազեցին լաբիրինթոսով:

Նրանք սլանում էին փոթորիկի պես, սուզվելով անվերջ պտույտների մեջ ու ավելի շատ հեռանալով դռնակից: Վերջապես մկնյակները դեմ առան փակուղուն ու կանգ առան շունչ առնելու:

- Այնտեղ հրեշ էր, հաստա՛տ եմ ձեզ ասում, - շունչը կտրած սվվաց Ջումբոն:

- Այո, ես էլ տեսա, - համաձայնվեց Չլմփիկը:

- Ոչինչ այնտեղ չկա, - փորձեց հանգստացնել ընկերներին Աղվանիկը:

- Ահ, դե լավ, - ուսերը թափահարեց Զլմփիկը: - Եկեք այստեղից դուրս գանք: Ի դեպ, մենք որտե՞ղ ենք:

- Կարծեմ, սա հին լաբիրինթոսների համակարգն է, որ անցնում է մեր գյուղի տակով, պատասխանեց Ջումբոն: - Այստեղից պետք է որ մի քանի ելք լինի: Շուտով կգտնենք որևէ մեկը…

- Ես խմել եմ ուզում, - գանգատվեց Զլմփիկը: - Լիմոնադ:

- Իսկ ես՝ ուտել, - ավելացրեց Ջումբոն:

Ընկերները նորից վազեցին ամբողջ ուժով: Հերթով փոխվում էին պտույտներն ու միջանցքները: Ու երբ Աղվանիկին թվաց, որ վազում է արդեն մի ամբողջ օր, նա հանկարծակի կպավ Ջումբոի մեջքին, իսկ հետևից վրա եկավ Զլմփիկը: Մկնյակները վար ընկան:

- Դու ինչո՞ւ կանգ առար, - հարցրեց Աղվանիկը տակին պառկած Ջումբոին:

Բայց հետո բարձրացրեց գլուխը ու տեսավ, որ մի արանքից առաստաղում արևի լույս է թափանցում ներս:

- Օգնեցե՛ք ինձ բարձրանամ, ես կլայնացնեմ արանքը, - առաջարկեց Ջումբոն: Մկնյակները կանգնեցին, Ջումբոն մագլցելով բարձրացավ Զլմփիկի ուսերին ու սկսեց թաթիկներով քչփորել արանքի մեջ: Ցած թափվեցին հողի կտորներ, իսկ հետո թրխկոցով վեր ընկավ փակ սնդուկ, բացելով մկնյակներին ելքը դեպի լույս:

- Վա՜յ, գանձ, - մի քիչ զարմացավ Զլմփիկը:

- Որտեղի՞ց դա հայտնվեց այստեղ, - մտքերի մեջ ընկավ Աղվանիկը: - Մեր նախնիները ամբողջ շրջապատը փորփրել հանել են դեռ երկու հարյուրամյակ առաջ:

- Կարևոր չի, կվերցնենք մեզ հետ, - ասաց Ջումբոն: - Զլմփիկ, թռցրու ինձ:

Զլմփիկը դեպի վեր զցեց փոքրիկ մկնյակին, ու Ջումբոն ներս թռավ գոյացած թունելի մեջ: Կպչուն չանգերով նա կառչեց ինչ-որ սանդղաձև խորշից, վեր ձգվեց ու դուրս եկավ առջևում բացված ելքով: Ու հայտնվեց առաջնորդ Շլըմփի խոհանոցում: Հատակին, բուխարու կողքին, որտեղից հենց նոր դուրս եկավ աղտոտված Ջումբոն, նստած էր Շլըմփի թոռնիկը ու խաղ էր անում կոներով:

- Փոքրիկ, իսկ ո՞ւր է պապիկդ, - հարցրեց Ջումբոն:

- Բոլորն էլ գնացին: Ինչ-որ մկնյակների փնտրելու, որ կորել են լաբիրինթոսում: Ոչ ոք չկա գյուղում:

- Էլի՞ կան լաբիրինթոսում կորածներ, - զարմացավ Ջումբոն: - Ա՜յ քեզ խեղճ ու կրակնե՛ր: Փոքրիկ, տուր, խնդրում եմ, մի պարան:

Շլըմփի թոռնիկը պարան բերեց, ու Ջումբոն իջացրեց դա արանքից: Առաջին հերթին պաշարապահ մկնյակները վեր բարձրացրեցին սնդուկը, հետո արդեն բարձրացան իրենք:

Նրանք կանգնել էին խոհանոցի մեջ, փոշոտալով ու իրենց թափ տալով, երբ մուտքի դուռը թրմփաց ու մի պահ հետո սենյակ մտավ Շլըմփը: Նրա քիթը կարմիր գույնի էր, իսկ գլխին մի կերպ հարմարված էր կոմպրեսը:

- Վա՜յ, - զարմացավ առաջնորդը: - Իսկ մենք ձեզ ամբողջ գետնատակով ենք փնտրում:

- Մենք արդեն ինքնուրույն փրկվեցինք, - ամաչելով պատասխանեցին մկնյակները:

- Պապիկ, իսկ մենք գանձ ենք գտել, - գլուխ գովաց թոռնիկը:

- Վա՜յ, ախր սա իմ առաջին գանձերով սնդուկն է, ես դա քսանհինգ տարի առաջ ինչ-որ մի տեղ կորցրեցի, բայց տես, թե որտեղից դա գտար:

Շլըմփը զգուշորեն շոյեց սնդուկը, ետ զցեց խուփը, նրանք թոռնիկի հետ նստեցին հատակին ու սկսեցին զննել հին գանձերը: Իսկ Աղվանիկը, Զլմփիկն ու Ջումբոն սրբեցին ճակատների քրտինքը, ջուր խմեցին ու գնացին փնտրելու բոլոր մնացած ավանի բնակիչներին ու պատմելու նրանց, որ գտնվել են ու էլ ոչ մի կարիք չկա նրանց փնտրելու:

- Հեյ, ջահելնե՛ր, - ձայն տվեց մկնյակներին Շլըմփը: Ե՞րբ վերջապես կսովորեք լսել մեծերին: Մի՞թե ձեզ քիչ է անցյալ շաբաթվա չլսելու պատմությունը:

Մկնյակները միասին հոգոց քաշեցին ու տխուր, դանդաղ քայլելով, գնացին ելքի մոտ՝ նրանք լա՜վ էին հիշում, թե ինչով ավարտվեց պատմությունը, երբ նրանք չլսեցին մեծերին:

## *Գլուխ 7.* Ինչպես Աղվանիկը, Զլմփիկն ու Ջումբոն չլսեցին մեծերին

Մի անգամ Աղվանիկը, Չլմփիկն ու Ջումբոն հանդիպեցին գյուղակի կենտրոնական հրապարակում: Չլմփիկը տարված խրթխրթացնում էր խնձորը, Ջումբոն մտամոլոր կծոտում էր խոտի մի ցողուն, իսկ Աղվանիկը հենց այնպես կանգնած էր, թաթիկները շորտիկի գրպաններում, ու մտածում էր, թե որտեղից ճարի սառնաշաքար փայտիկով:

Հանկարծակի Աղվանիկի գլխում մի շատ հետաքրքիր միտք ծագեց:

- Ընկերներ, ես չեմ հասկանում, ինչո՞ւ մենք պետք է հանձնենք մեր գտածը մեր գանձարան «ռմբարդը», ինչո՞ւ չտանել միանգամից մարդկանց ու տալ նրանց, որ նրանք տեսնեն, թե ով է բերել:

Չլմփիկը մի պահ դադարեց խրթխրթացնել, իսկ Ջումբոն ասաց. «Որովհետև այդպես են կարգադրել ավագները, ուրեմն այդպես էլ պետք է անել»:.

- Բայց հակառակ դեպքում մենք մարդկանցից կստանայինք շատ տարբեր համեղ բաներ, համ էլ մարդիք մեզ կգովեին, - չէր հանգստանում Աղվանիկը:

- Գնանք թագավոր Ծլըմփի մոտ, նա ամեն ինչ կբացատրի, - վերջապես Չլմփիկը ավարտեց խնձոր կրծելը:

- Չե հա՛, նա կսկսի մեզ սովորեցնել - մինչ երեկո դասախոսություն կլսենք, - նվնվաց Աղվանիկը:

- Իսկապես, գնանք թագավորի մոտ: Նա հաստատ կպատմի, - սատարեց ընկերոջը Ջումբոն:

Ընկերները շարժվեցին Ծլըմփի տան ուղղությամբ, չլսելով Աղվանիկի փնթփնթոցն ու նվնվոցը:

Մկնյակները կանգ առան թագավոր Ծլըմփի տան առաջ ու իրենց կարգի բերեցին, որովհետև թագավորը չէր սիրում փնթի մկնյակներին ու կարող էր թեթևակի խփել ձեռնափայտով հագուստի կամ սանրվացքի անփութության համար:

Չլմփիկը թխկացրեց դռան մուրճիկով, ու մի րոպե անց տան մեջ լսվեց սենյակի չստերի շփշփոցը ու հազոց: Դուռը բացվեց, ու շեմին հայտնվեց թագավոր Ծլըմփը: Նրա հագին հին, մաշված պատմուճան էր, կարճ շորտիկ, գլխին թիթեղյա ճմրթված թագը, իսկ թաթերով նա բռնել էր ձեռնափայտը՝ ծուռ երկար փայտ:

- Ի՞նչ հարցով եք եկել, տղանե՛ր, - թագավորը քնքշորեն ժպտաց մկնյակներին: - Միգուցե ձեր մայրիկները իմ համար ուղարկել են մի կտոր քաղցր պանիր կամ մի սափոր մորու մուրաբա՞:

- Ո՛չ, Ձեր Ընդպայծառություն, - առաջ անցավ Չլմփիկը: - Մեզ պետք է Ձեր խորհուրդը:

- Դե խորհուրդ, ուրեմն խորհուրդ, - թագավորը միանգամից տխրեց ու հազաց, մանր տմբտմբացնելով գլուխը, ինչից թագը սկսեց զրնգալ: - Միայն թե կարճ խոսեք, իսկ ես ավելի լավ է բուխարու կողքին նստեմ:

- Ասացե՛ք, թագավոր, կարո՞ղ ենք մենք բացեիբաց տանել գտած իրերը մարդկանց, որպեսզի նրանցից համեղ բաներ ստանանք ու նրանց ընկեր դառնանք: Ջումբոն արտասանեց այս ամենը մի շնչով, ասես պատրաստված լիներ:

Ծլըմփ թագավորը գլուխը տարուբերեց, հոգոց քաշեց ու պատասխանեց. «Մենք վերադարձնում ենք գանձերը մարդկանց արդեն երկար տարիներ: Մենք չենք երևում նրանց առաչ ու գլուխ չենք գովում, որ դրանք մենք ենք գտել: Մենք չե՛նք սպասում գովասանքների, նվերների ու շնորհակալական խոսքերի, որովհետև այն ժամանակ մեր ծառայությունը մարդկանց կլինի շահախնդրական: Բացի դրանից, եթե ձեզ սկսեն գովել, ապա դա կլինի շատ վատ, որովհետեվ այն ժամանակ ամեն մի մկնյակ կսկսի մտածել, որ նա է ամենալավը, իսկ դա միշտ վատ է»: Ծլըմփ թագավորը արտահայտիչ կերպով նայեց մկնյակներին, թաթիկով արեց ու փակեց դուռը:

Աղվանիկը, Չլմփիկն ու Ջումբոն իրար նայեցին:

- Բայց, թագավո՛ր... - փորձեց հակառակվել Չլմփիկը, սակայն դուռը փակ էր ու չէր պատասխանում:

Աղվանիկը լեզու հանեց նրա վրա ու շուռ եկավ դեպի ընկերները.

- Ես մի միտք ունեմ, եկե՛ք ստուգենք թագավորի խոսքերը գործնական, գուցե արժե՞ փոխել հին օրենքները: Եթե թագավորը իրավացի չէ, ապա ամբողջ տոհմը մեզ շնորհակալություն կասի ու մեզ կգովեն:

- Չե որ լսեցիր, որ սպասել, առավել ևս խնդրելով ձեռք բերել գովեստը մեծերից միայն վնաս է տալիս, - Ջումբոն խոժոռեց ունքերը:

- Ա՛հ, փուչ բան է, - Աղվանիկը կնճռոտեց ունքերը: - Դեպի առա՛ջ, իմ ետևից, թե չէ տեսնում եմ, դուք պարզապես վախեցա՛ք:

Մկնյակները թռթվեցին ուսերը, նայեցին իրար ու վազեցին, որ հասնեն Աղվանիկին:

- Ուրեմն այսպես, - Աղվանիկը ընդունեց խորհրդավոր տեսք ու դիմեց Չլմփիկին. - Մենք ասում ենք քո ծնողներին, որ գնացինք Ջումբոի մոտ խաղալու, պա՞րզ է:

Դիմելով Ջումբոին, Աղվանիկը շարունակեց.

- Իսկ քո ծնողներին՝ գնացինք խաղալու Չլմփիկի մոտ: Ծնողները կմտածեն, որ մենք մեծերի հսկողության տակ ենք, իսկ մենք այդ ժամանակ կստուգենք հին կանոնները:

Մկնյակները վազեցին տարբեր կողմեր ու շուտով հավաքվեցին նույն տեղում:

Աղվանիկը թաթիկով բռնել էր մի փոքրիկ դուդուկ, փոքրիկ թմբուկ փայտիկներով, հին կրծքազարդ, մի ծուռ փայտ ու սև գլխաշոր: Չլմփիկը նայեց այս բոլոր իրերի վրա ու հարցրեց.

- Իսկ ի՞նչ ես անելու սրանց հետ:

Աղվանիկը զիջողաբար բացատրեց.

- Մենք կտանենք անտառապահին ու նրա կնոջը այս կրծքազարդը – ես դա գտա ոչ հեռու անտառի պահակատնակից: Դու, Չլմփիկ, կփչես դուդուկը, իսկ դու, Ջումբո, կխփես թմբուկին, այդպես ավելի ուրախ կլինի: Իսկ ես կբռնեմ այս փայտը սև գլխաշորով որպես դրոշ: Ա՛յ թե մարդիք կուրախանան:

Ջումբոն կասկածանքով նայեց սև գլխաշորին, որի վրա սպիտակով գործված էին գանգ ու ոսկորներ ու հարցրեց.

- Իսկ դու համոզվա՞ծ ես, որ սա գեղեցիկ դրոշ է:

Աղվանիկը առհամարհանքով նայեց ընկերոջը ու պատասխանեց.

- Իհա՛րկե համոզված եմ: Ես շատ անգամ եմ տեսել տարբեր նկարներում, որ մարդիք տանում են այսպիսի դրոշներ: Առա՛ջ, դեպի անտառապահի տնակը:

Մի րոպեից Աղվանիկը, Չլմփիկն ու Ջումբոն արդեն գնում էին խիտ անտառի արահետով: Չլմփիկը ուժգին փչում էր դուդուկը, Ջումբոն փայտերով խփում էր թմբուկին, իսկ Աղվանիկը տանում էր սև դրոշն ու հին կրծքազարդը:

Հենց այն պահին, որ ընկերները հայտնվեցին ոչ հեռու անտառապահի տնակից, տանտիրուհին դուրս եկավ տնից, որպեսզի կախի լվացքը: Լսելով դուդուկի զիլ ծվծվոցն ու թմբուկի խլացնող ձայները անտառապահի կինը, հանկարծակի գալով, ա՛խ քաշեց ու ձեռքից վայր գցեց լվացքով թասը:

Ուշադիր նայելով տարօրինակ խմբին, կինը տեսավ սև դրոշը գանգով ու ոսկորներով ու ճչալով փախավ տնակի մեջ: Մի վայրկյան հետո դուրս պրծավ ածղահա միրուքավոր անտառապահը, հրացանը դեպի առաջ թեքած ու ոռնաց եղջերուի պես: Նշան բռնելով, անտառապահը կրակեց ու դիպավ սև դրոշին: Դրոշի կոթը կես եղավ, կտորը ընկավ Համսիկի գլխին: Մկնյակները վախեցան ու ուզում էին փախչել, բայց Աղվանիկը, փաթաթված կտորով, ընկավ փոշու մեջ, ետևից նրա վրա ընկան Չլմփիկն ու Ջումբոն: Անտառապահը նորից վայրենի ձայնով գոռաց, կրակեց, բայց կպավ հին եղևնուն, ինչի հետևանքով մկնյակների վրա թափվեցին փշեր ու կոներ: Վնգստալով ու ճչալով մկնյակները ոտքի ելան ու, իրար առաջ ընկնելով, նետվեցին տուն:

Գյուղակից ոչ հեռու մկնյակները անցան վազքից քայլելուն ու հենց այստեղ սկսեցին քննարկել տեղի եղածը: Ծունչը կտրած Աղվանիկը թաթով կպավ Չլմփիկին ու արտաշնչեց.

- Ամեն ինչում դո՛ւ ես մեղավոր, Չլմփիկ: Դու չափազա՛նց ծվծվալով էիր փչում դուդուկը: Ա՛յ թե ինչու մեզ այդքան վատ ընդունեցին մարդիք:

- Ե՞ս: Ի՞նչ կապ ունեմ ես այս ամենի հետ, - ոռնաց Չլմփիկը: Սա հենց սկզբից վատ միտք էր: - Իսկ դո՛ւ, Ջումբո, չափազանց աղմկոտ էիր խփում թմբուկը, իսկ պետք էր կամաց ու նուրբ, - իրեն չկորցնելով շարունակեց Աղվանիկը:

- Ի՞նչ: Ոնց էլ չե՛ս ամաչում, - դժգոհեց Ջումբոն:

Մկնյակները, վիճելով ու իրար մեղադրելով, արդեն համարյա թե հասել էին գյուղ, մեկ էլ վերևից լսվեց ծեր ագռավի կռռոցը:

- Հերի՛ք է վիճել: Հիմա ձեզ կհաշտեցնեն, - քմծիծաղ տալով նա ցույց տվեց թաթով դեպի գյուղը: - Մեծերին պետք է լսել: Թե չէ այստեղ կրակոցներ են կազմակերպել, ամբողջ անտառով

լսվում է, կյանք չունենք ձեր պատճառով, ճրիակերնե՛ր, գործ անելու փոխարեն տես, թե ի՛նչ են հորինել՝ սարսափեցնել ազնիվ կենդանիներին ու թռչուններին, ա՛յ թե կստանաք ձեր ծնողներից...

Ագռավը շարունակում էր փնթփնթալ ու դժգոհել, բայց մկնյակները էլ նրան չէին լսում: Աղվանիկը, Չլմփիկն ու Ջումբոն նայում էին գյուղակի կողմը, ուր ամբողջ մկնյակների տոհմը լիակատար լռության մեջ սպասում էր խոսք չլսող ընկերներին: Աղվանիկին, Չլմփիկին ու Ջումբոյին ընդառաջ դուրս եկան նրանց ծնողները: Թագավոր Շլըմփը հոգոց քաշեց ու տխուր ժպտաց, գլուխը տարուբերելով:

### *Գլուխ 8.* Հանդիպում թյունիկների հետ

Մի ամառային գեղեցիկ օր, երբ հերթական Աղվանիկի պատիժը ավարտվեց, նա Ջումբոյի ու Չլմփիկի հետ միասին գնաց գանձեր փնտրելու: Ընկերները դուրս եկան գյուղից վաղ առավոտյան, դեռ նոր էր լույսը բացվել: Նրանք դուրս եկան արահետ ու երգում էին փնտրաերգը, որը հաճախ երգում են մկնյակները գանձեր որոնելիս: Դեռ նոր էին արահետից թեքվել, խորանալով անտառի մեջ, ընկերները հանկարծակի կանգ առան, քիթ քթի կպնելով երեք կենդանու, որ քաշում էին իրենց ետևից խոտով սայլակը ու շատ նման էին մկնյակներին:

Այդ երեք կենդանիները, եթե նայել նրանց հագուստին ու հյուսիկներին, աղջիկներ էին, ու տարբերվում էին մկնյակներից միայն ավելի մուգ մորթիով ու ավելի մազոտ պոչիկներով:

Մկնյակները, չնայած նրան, որ սիրալիր արարածներ են, ներսից, այնուամենայնիվ, անտառային կենդանիներ էին, այդ պատճառով անծանոթներին հանդիպելով իրենց գյուղի մոտակայքում նրանց մեջ գլուխ բարձրացրեց սեփական հողերը պաշտպանելու կենդանու բնազդը: Մի քանի վայրկյան լռությունից հետո Աղվանիկը որոշեց ղեկավարի դերը վերցնել իր թաթերի մեջ ու մի քայլ արեց դեպի առաջ:

- Ո՞վ եք դուք, - հարցրեց նա աhեղ ձայնով, նայելով ընկերներին ու փնտրելով նրանց աջակցությունը: Ջումբոն ու Չլմփիկը նույնպես ցուցադրեցին իրենց մարտականորեն՝ խոժոռեցին ունքերն ու լուրջ տեսք ընդունեցին:

Մենք թյունիկներն ենք: Թյունիկների՝ Դաշտերի, Գետերի ու Սարերի Տերերի փառավոր տոհմից, - իրեն չկորցրեց թյունիկներից ամենաբոյովը: - Իմ անունը Կվասուլիկ է, սրանը Կուկվիմբ է, իսկ սրանը Մաքասիկ: - Իսկ դուք ո՞վ եք:

- Մենք մկնյակներն ենք, Կորցրած Իրերի Մեծագո՛ւյն Փնտրողներ ու Գանձերի Վերադարձնողնե՛ր, Հզոր Մկնյակների Տոհմը: - Իսկ դուք ո՞ւր եք գնում ու ի՞նչ եք տանում սայլակով, - Աղվանիկի ուսի ետևից դուրս նայեց ու ձայն տվեց Ջումբոն:

- Իսկ ինչո՞ւ մենք պետք է հաշվետու լինենք ձեր առաջ, - իմաստաբար նկատեց Մաքասիկը: - Գնացե՛ք ձեր ճանապարհով, - ավելացրեց Կուկվիմբը սպառնացող ձայնով:

- Սա մեր հողն է, ու մենք պետք է իմանանք, թե ով է այստեղ քայլում ու ինչ նպատակով, - հայտարարեց Չլմփիկը:

Իսկ ապացուցիչ փաստաթուղթ դուք ունե՞ք, որ սա ձեր հողն է, - խայթիչ կերպով հարցրեց Կվասուլիկը ու քմծիծաղ տվեց: Նենգամիտ հարցը հանկարծակի բերեց մկնյակներին:

Մնացած թյունիկները սկսեցին ծիծաղել Կվասուլիկի կատակի վրա, ինչով հավասարակշռությունից հանեցին մկնյակներին:

Աղվանիկը մոտեցավ Կվասուլիկին ու փորձեց նրան հրել ճանապարհից, բայց Կվասուլիկը միայն տարուբեր եղավ, պինդ ու հաստատորեն մնալով արահետի վրա, չզիճելով տեղը Աղվանիկին:

- Հեյ, երիտասա՛րդ, ավելի լավ է պահես քո թաթիկները քեզ, - զգուշացրեց Կվասուլիկը, ծռելով ունքը, ու քմծիծաղ տվեց, ցուցադրելով սուր ատամիկները:

Դրությունը անտառի արահետում ավելի ու ավելի սրանում էր:

Կվասուլիկը բավականին հաստատորեն էր զգում իրեն, համարելով, որ բավականին գոտեմարտից գիտելիքներ ունի, որոնց հետ ծանոթացել էր, կարդալով մի անգամ բացատում գտած գրքից: Դա «Ինքնապաշտպանություն առանց զենքի» ձեռնարկ էր, ու Կվասուլիկը լավ հիշում էր կիմոնո հագած մարդկանց նկարները: Ինքնավստահ Կվասուլիկը ժպտում էր գոտեմարտի ակնկալիքով, իսկ Մաքասիկն ու Կուկվիմբը ցուցադրական հորանջեցին, փակելով բերանները թաթիկներով, ձևացնելով, որ տեսել են ոչ միայն այսպիսի մարտեր:

Աղվանիկը ավելի հաստատորեն հրեց Կվասուլիկին ու անմիջապես զգալի ու ցավոտ հարված ստացավ քթին: Նրա աչքերը արցունքոտեցին, ու նա անմիջապես ատամներով ճանկեց նրան խփող թաթիկը: Կվասուլիկը ծվծվացրեց ու չռած աչքերով վրա տվեց Աղվանիկին, կծելով ու չանգռելով: Համառ մարզանքների, հղկված մարզաձևերի ու տեխնիկական պատրաստման բոլոր տարիները փոշի դառան, ու անտառի բնակիչները սարքեցին տիպիկ գազանների ծեծկռտոց ճվճվոցով, ծվծվոցով, պոկած բրդի ծվեններով ու ճանգռտած մորթիկով:

Աղվանիկը, Զումբոն ու Չլմփիկը իրենց գյուղը վերադարձան մոտավորապես մի ժամ հետո, գլուխները կախ, ճղտոտված շորերով, կապտուկներով ու չանգռտված:

Մկնյակների տոհմը արդեն սովոր էր, որ մեր ձախորդ հերոսների հետ նախանձելի կանոնավորությամբ պատահում էին անհեթեթ դեպքեր, սակայն լսելով նրանց անկապ պատմությունը, բոլորը խղճացին տուժածներին և լրջորեն իրար անցան: Կար ինչի համար՝ մկնյակներին երկու կաթիլի նմանություն ունեցող արտասովոր կենդանիներ թրև են տալիս իրենց բնակավայրի շուրջը ու իրենց պահում են բավականին հանդգնորեն: Տոհմը դիմեց ավագներին խորհուրդ ստանալու նպատակով: Գյուղի խելացի գլուխները խառնվեցին իրար, նրանք ոչինչ չէին իմանում ոչ մի թյունիկների մասին, միայն ծերուկ Շլըմփը արտահայտչաբար ճռնչաց, թափ տվեց ոտքերով, հիշելով մագնիսային դաշտում հորինած պարը, ու, հենվելով ձեռնափայտին, ասաց.

- Ես գիտեմ, ովքեր են դրանք:

Հետաքրքրված տոհմը, շունչը պահած, շուրջ կազմեց ծերունու մոտ ու սրեց ականջները:

- Վաղ ժամանակներում՝ իմ պապի պապի, մկնյակների ու թյունիկների տոհմը մեկն էր: Այն ժամանակ չկային ոչ մկնյակներ, ոչ էլ թյունիկներ:

- Իսկ ո՞վ կար, - խմբով արտաշնչեց ամբողջ տոհնը, հարմար նստելով սիրելի թագավորի շուրջը:

- Կային ականջփափլիկներ… - տխուր ասաց Շլըմփը: - Դուրեկան ու բարի ականջփափլիկները…

- Ականջփափլիկնե՞ր, - մկնյակների շարքերով անցավ հիացմունքի հոգոց:

- Ականջավորիկներ ու փափլիկներ, իրար հետ շշնջացին մկնյակները:

- Ըհը, ըհը… - գլխով արեց Շլըմփը: Այդ փառավոր տոհմը անհիշելի ժամանակներից գտնում ու վերադարձնում էր գանձերը մարդկանց – դա իրենց նպատակն էր, կյանքի խնդիրն ու իմաստը:

- Տոհմից ոչ ոք չգիտեր ու չէր հիշում, ինչու ականջփափլիկները պետք է վերադարձնեն մարդկանց նրանց գանձերը, սակայն բոլորը հասկանում էին, որ այդպես է պետք: Պե՛տք է ու վերջ: - Շլըմփի ձայնը դողում էր հուզմունքից: - Ու այդ ականջփափլիկները անտառի խիղճն ու հույսը. ամենաասատիկ ցրտին կամ սովի ծամանակ այդ միասնական տոհմը կարող էր ապաստարան տալ, տաքացնել ու կերակրել ամեն մի կենդանու…

- Նույնիսկ փղի՞ն, - ինչ-որ մեկը հարցրեց բարալիկ ձայնով լռության մեջ:

- Իսկ դու սո՛ւս մնա: Ի՞նչ փիղ: Սա հո Աֆրիկան չի՛: Մտածել է պետք, - շարքերում դժգոհության ձայներ լսվեցին:

- Շարունակե՛ք, Ձեր Մեծություն, խնդրո՛ւմ ենք Ձեզ, - դիմեց Զումբոն թագավորին:

- Եվ ահա եկավ դժվարին ժամը նաև ականջփափլիկերի համար, - հոգոց քաշելով շարունակեց Շլըմփը: Տարին չափազանց վատն էր. չոր, մրրիկաշատ, ցունամավոր ու բուքավոր:

Այդքան անծանոթ բառերից, հենց նոր հորինած Շլըմփի կողմից, ամբողջ տոհմը մի փոքր ապշեց, բայց ոչ-ոք թագավորի խոսքը կտրել չհամարձակվեց. նա կարող էր հենց այնպես վեր կենալ ու գնալ, ու արի հետո փնտրի հետաքրքիր պատմողի:

- Այդ տարի անտառում լրիվ կտրվեց ուտելիքը. չկար ոչ խոտ, ոչ սունկ, ոչ մորի, - տատանվելով կողմից կողմ շարունակում էր թագավորը ծոր տալով: - Սոված էին բոլորը. և գայլերը, և վարազները, և եղջերուները, և նապաստակները…

- Նույնիսկ փղե՞րը, - ինչ-որ մեկը մեջ մտավ նույն բարալիկ ձայնով:

Շլըմփը կնճռոտեց դեմքը, խիստ հայացքով նայեց տոհմին ու ձայնը կտրեց:

- Դե հեռացրե՛ք այս տաղտկալիին: Հա փղին է հիշում: Տե՛ս, ինչ խելոքն է, - սկսեցին դժգոհել շրջապատում:

- Այդ տարի քաղցից տառապեցին նաև ականջփափլիկները. բոլոր պաշարները պրծել էին, պահեստում չկար ոչ մի հատիկ, լոմբարդում չկար ոչ մի գանձ, - հանգիստ շարունակում էր թագավորը: Ականջփափլիկները սովի էին մատնված:

Տոհմը վերջին բառերից հետո քար կտրեց ու պահեց շունչը: Նույնիսկ փայտփորիկը ծառի վրա դադարեց թքթքացնել ու վախեցած չռեց աչքերը:

- Հենց այդ պահին առաջ անցավ ինչ-որ Կումբրեյ, ու հայտարարեց, որ ականջփափլիկները նպատակ չունեն սովից մեռնել, ու այդ պատճառով նա հեռանում է տոհմից ու էլ պարտավոր չի զանձեր տանելու մարդկանց: Բոլոր ցանկացողները կարող են գնալ նրա ետևից, - Ծլըմփի թագավորը հոգոց քաշեց ու նայեց հեռուն մկնյակների գլուխներից այն կողմ:

Բոլոր մկնյակները միասին թեքեցին իրենց գլուխները Ծլըմփի հայացքի ուղղությամբ, բայց, ոչինչ չտեսնելով, նորից միաժամանակ թեքվեցին դեպի պատմողը:

- Կումբրեյի ետևից ականջփափլիկների տոհմից գնաց մոտ մեկ երրորդը, իսկ մնացածը մնացին ծեր Մկնյակոս թագավորի հետ - իմ նախա-նախա-նախա-նախապապի, - շարունակում էր Ծլըմփը: - Այդ ժամանակվանից բոլորին, ով գնաց Կումբրեյի հետ, սկսեցին անվանել կումբրեկներ, իսկ հետո՝ թյունիկներ: Իսկ նրանց, ով մնաց տոհմում Մկնյակոսի հետ՝ մկնյակներ: Ու հիմա կենդանիները իրար հետ վիճել են, ու տոհմը բաժանվել է երկու մասի: Այն մասը, որը անվանում է իրենց թյունիկներ, գնաց ինչ-որ շատ հեռու տեղ, ու այդ ժամանակվանից նրանցից ոչ մի լուր չկար: Հենց այդ ժամանակվանից ոչ-ոք ու երբեք անտառում չի տեսել թյունիկներին – ոչ աղվեսները, ոչ արծիվները, ոչ ջրարջերը…

- Նույնիսկ փղե՞րը, - ինչ-որ մեկը կամացուկ ընդհատեց թագավորին նույն բարալիկ ձայնով:

- Դե ո՞վ է այնտեղ այդքան գրագետ: Հեռացրեք այդ խելոքին: Որքա՜ն է կարելի, - տոհմի դժգոհությանը վերջ չկար:

Ծլըմփի թագավորը նայեց մկնյակներին, փնտրելով խելոք փղասերին ու մտածելով, թե ինչպես ավելի դիպուկ զցի նրա վրա իր փայտը, սակայն չգտավ ու հանգստացավ:

- Ու հիմա ահա նրանք հայտնվեցին ու, ելնելով Աղվանիկի կապտուկներից, թյունիկները տրամադրված են նույն ձևով մարտական, ինչպես այն մեր բաժանման օրը, - ավարտեց իր խոսքը Ծլըմփը:

Մկնյակները Ծլըմփի խոսքերից հետո սկսեցին աղմկել, քննարկելով նորությունը: Շատերը, առավել ագրեսիվ տրամադրվածները, առաջարկում էին գնալ նեղացնողներին փնտրելու ու անմիջական պատասխան տալու: Սակայն Ծլընփը, հանկարծակի բարձրացնելով ձայնը ու խփելով գետնին իր փայտը, ցուցադրեց, թե ինչու էր շատ տարիներ առաջ ղեկավար ընտրվել:

- Ես առաջարկում եմ չանել շուտափույթ եզրակացություններ: Երիտասարդ կենդանիները հաճախ են կռվում, ջանալով հաստատվել ու անուն հանել, իսկ Աղվանիկի հնարների մասին – կազմակերպել իրարանցում, խառնաշփոթություն ու հրդեհներ ոչնչից – կարծում եմ, ավելորդ է հիշեցնել: Հաջորդ հանդիպման ժամանակ, իմ կարծիքով, ավելի լավ է բոլորդ պահեք ձեզ ավելի սիրալիր ու փորձեք ստեղծելու սերտ հարաբերություն մեր ազգակիցների հետ: Չե՛ որ հետաքրքիր է, ուր էին կորել այսքան տարի ու ինչու են վերադարձել:

### *Գլուխ 9.* **Մկնյակների գյուղ գալիս են Համսիկն ու Ռոզիկը**

Մի քանի շաբաթ անց թյունիկների հետ պատահարից հետո մկնյակների մոտ պատահեց ևս մի անսովոր պատմություն:

Այն առավոտ, հենց որ արևը լուսավորեց գյուղակը, Աղվանիկն արթնացավ ու սկսեց հագնվել: Նա կարգի բերեց անկողինը ու դուրս պրծավ տնակից: Թակելով Ջումբոի ու Չլմփիկի պատուհաններին, Աղվանիկը կանչեց ընկերներին մարզանքի: Ջումբոն ու Չլմփիկը եղբայրներ էին, Աղվանիկն էլ մի ժամանակ ուներ եղբայր ու քույր – Դեղձիկ ու Փուսիկ, բայց շատ տարի առաջ նրանք, չլսելով մայրիկին, ինքնուրույն գնացին անտառ սունկ հավաքելու ու կորան: Մեծերը երկար փնտրեցին նրանց, բայց այդպես էլ չգտան:

- Ոտքի՛: Մարզանքի պատրա՛ստ, - հրամայեց Աղվանիկը: Ի պատասխան նրա վրա թռան ճմրթված գուլպաներ ու գոռոցներ. «Հանգիստ թո՛ղ» ու «Թո՛ղ քնեմ»:

Բայց Աղվանիկը համառ էր, պրծնելով ևս մի քանի առարկաներից, որ թռնում էին նրա վրա իր հրամանի պատճառով, նա կարողացավ արթնացնել իր ընկերներին ու դուրս հանել փողոց: Աղվանիկը վերցրեց իր սիրած գանտելները ու սկսեց կատարել ձեռքի արագ շարժումներ ու հարձակումներ: Ջումբոն ու Չլմփիկը առայժմ գերադասեցին մի փոքր շարժումներ անել առանց լրացուցիչ ծանրաբեռնությունների: Աղվանիկը շատ էր սիրում իր գանտելները, իսկ Ջումբոն

Աղվանիկի գանտելներից ետ էր քաշվում ու զզուշանում: Մի անգամ ձմռանը գանտելները ծածկվել էին գեղեցիկ եղյամով, ու Ջումբոն որոշեց անպայման փորձել դրա համը, որ շատ նման էր սառցաշաքարի: Սակայն եղյամը այնքան էլ համեղ չեղավ, բայց Ջումբոի լեզուն անմիջապես կպավ մետաղին, ու խեղճ ու կրակին փրկելու համար ընկերները սկզբից սկսեցին քաշել նրա գլխից, իսկ հետո եռման ջուր լցնել թեյնիկից գանտելի ու նրան կպած լեզվի վրա: Այս դեպքի արդյունքում Ջումբոն մի շաբաթ չէր կարողանում խոսել, հանած ուռած լեզուն, իսկ մյուս մկնյակները հիշեցին այս պատմությունը ու մեկ-մեկ նույնիսկ ձեռ էին առնում նրան, չնայած, եթե մտածել, ծիծաղելին այստեղ շատ քիչ էր:

Ընկերները նոր էին սկսել մարզանքը, երբ գյուղի մուտքի մոտ սկսվեց ինչ-որ իրարանցում: Ջումբոն ու Ծլմփիկը, թողնելով մարզանքը, վազեցին այնտեղ, Աղվանիկը՝ նրանց ետևից, որպեսզի վերադարձնի եղբայրներին մարզմանը: Մոտիկ գալով ընկերները տեսան, որ մի խումբ շրջապատել է նրանց երկու հին ծանոթներին - Համսիկին ու Ռոզիկին:

Գազանիկները ճղտոտված շորերով էին, հոգնած տեսքով, իսկ Համսիկը նույնիսկ նիհարել էր:

- Համսի՛կ: Ռոզի՛կ: Ի՞նչ է պատահել: Ո՞նց եք դուք այստեղ հայտնվել, - զարմացած հարցրեց Աղվանիկը:

- Ջուր…- տնքաց ի պատասխան Համսիկը: Նրան անմիջապես տվեցին մի թասիկ խմելիքով:

- ...ու ուտելիք... - խմեց ու տնքաց համստերիկը: Ինչ-որ մի մկնյակ նրան խնձոր տվեց, մյուս մեկը՝ չորահաց: Այս ամենը մի վայրկյանում անհետացավ Համսիկի բերանում:

- Բրինզա... - նորից տնքաց համստերը:

- Պատմի՛ր, ինչ է պատահել, - նրա խոսքը կտրեց Չլմփիկը:

- Ախ, դա սարսափելի է, - նվնվաց Համսիկը: Տեսնելով, որ Համսիկը ուզում է դեռ երկար խաղալ ողբերգական դերը, թութակ Ռոզիկը, մի քիչ ջուր խմելով, իր վրա վերցրեց պատմողի դերը:

- Մենք ամբողջ գիշերը ձեր գյուղն էինք փնտրում, անցնելով մացառուտի միջով:

- Ի՞նչը պատճառ հանդիսացավ, որ թողեցիք ձեր տունը, - հարցրեց ավագ Ծլըմփը:

- Դա աղեկտուր պատմություն է…, - տնքաց համստերը, չանդրադառնալով մանրամասնություններին ու նորից բրինզա խնդրեց, իսկ Ռոզիկը սկսեց բացատրել.

- Մենք պատահական լսեցինք, որ Սոֆին շուն էր խնդրում հայրիկից, իսկ համստերին ու թութակին, որոնցից ձանձրացել է, ինչ-որ մի տեղ տանել, օրինակ՝ վաճառել կամ նվիրել: Սկզբում հայրիկը փորձում էր բացատրել, որ գազանները նույն կենդանի արարածներն են, ինչ մարդիք, բացի դրանից՝ նրա ընկերները, ուրեմն պետք է մնան տանը, սակայն դուստրը շարունակում էր պնդել ու լաց եղավ:

- Անտանելի է... - մեկնաբանեց Համսիկը, ծամելով ինչ-որ մեկի բերած պանիրը:

- Այն գիշեր, խորհուրդ անելուց հետո, մենք որոշեցինք հենց այնպես գնալ տնից, եթե մենք ձանձրացրել ենք տանտերերին: Իսկ ձկնիկները մնացին ակվարիումի մեջ, չկարողացան մեզ հետ գալ, - տխուր ավարտեց Ռոզիկը: - Կընդունե՞ք մեզ ձեր գյուղը, - հույսով հարցրեց նա:

- Դե իհա՛րկե: Դուք կարող եք ապրել գյուղակում ինչքա՛ն ուզեք, - ուրախ գոռացին Աղվանիկը, Ջումբոն ու Չլմփիկը ու ուղեկցեցին գազանիկներին Աղվանիկի տունը:

Համսիկը իր վրայից հանեց վզակապը, որի հակառակ կողմում մանր ձեռագրով գրված էր. «Բարև ձեզ, իմ անունը Համսիկ է: Եթե դուք կարդում եք այս նամակը, ուրեմն ես կորել եմ: Քանի որ ես չեմ կարող խոսել մարդու պես ու չեմ հիշում իմ հասցեն, ապա խնդրում եմ կապնվել իմ տիրուհու Սոֆիի հետ այս հասցեով. քաղաք Վոլնիյ, Խաղաղության Ծառուղի, տուն 7, ու վերադարձնել ինձ: Ձեզ անպայման կվճարեն վարձատրություն, իսկ ինձ կտան համեղ թխվածք»: Համսիկը նայեց վզակապին, հոգոց քաշեց ու շպրտեց այն թփերի մեջ:

- Մնա՛ս բարով, հին կյա՛նք: «Կամուրջները վառած են, ու ետ ճանապարհ չկա…» - ճոռոմաբար արտասանեց համստերը:

- Ազատությո՛ւն, - ոգևորելով խփեց նրա ուսին Ջումբոն:

Այդ պահից Համսիկն ու Ռոզիկը բնակվեցին Աղվանիկի տնակում ու ասես նրա եղբայրն ու քույրը լինեին: Այսպես տնային, ընտելացրած գազանիկները դարձան անտառային բնակիչներ:

## *Գլուխ 10.* Աղվանիկն ու նրա ընկերները դաշտ են վարում

Մի քանի օր անց, բավականին վաղ առավոտյան, Համսիկի խռռոցից ու Ռոզիկի շվշվոցից, որ նա արտաբերում էր երազում, արթնացած Աղվանիկը բացեց աչքերը ու հայացքը հառեց առաստաղին:

- Այսօր պետք է ինչ-որ լավ բան անել, - միտք ծագեց նրա գլխում: - Ու որ լավը շատ լինի, - շարունակեց միտքը: Օրը խոստանում էր պայծառ լինել:

Մկնյակը պառկել էր ու մտածում էր, թե ինչ լավ բան կարելի է անել:

- Զորից, - ծվվաց երազում Համսիկը ու մյուս կողք գլորվեց: Աղվանիկի գլխում միտք ծագեց: Նա հագնվեց, կարքի բերեց մահճակալը ու ուղղվեց իր սովորական մարզանքին: Թ-ութակին ու համստերին նա որոշեց առայժմ պարապմունքների չկանչել, որովհետև Համսիկը հայտարարեց, որ չափազանց հյուծված է, իսկ Ռոզիկը առանց այն էլ շատ է թռել, այդ պատճառով նա բարեկազմ էր, տոկուն թևիկներով:

Հերթական անգամ մազապուրծ լինելով գուլպաներից, չստերից ու թաղարից, սակայն այնուամենայնիվ արթնացնելով իր ընկերներին, Աղվանիկը սկսեց մարզանքը ու պատմեց Ջումբոին ու Չլմփիկին իր օգտակար լինելու ցանկության մասին:

- Դե և, բնականաբար, ես ձեր օգնության կարիքն ունեմ, - ավելացրեց Աղվանիկը:

- Ըհը, - կրկնակի գլխով արեց այսօր քիչ խոսող Չլմփիկը:

- Ու ի՞նչ պետք է անել, - հարցրեց Ջումբոն:

- Անտառաեզրում, ձորակի կողքին, մի փոքր տարածություն կա, ու մի քանի գյուղացի այնտեղ հող են վարում ձիու ու գութանի օգնությամբ, - սկսեց բացատրել Աղվանիկը: - Եկե՛ք օգնենք գյուղացիներին, երբ նրանք գնան ճաշելու, մենք հողը կվարենք մինչև վերջ: Մարդիք կվերադառնան ու կուրախանան, - ոգևորված ավարտեց Աղվանիկը:

- Իսկ Համսիկին առաջարկե՞լ ես, - հարցրեց Չլմփիկը:

- Նա ասում է, որ դեռ շատ թույլ է անտառով ճանապարհորդությունից հետո, բայց հետաքրքրվել կարելի է…

- Ե՛ս դերասան եմ, ոչ թե հողագործ - լսելով առաջարկությունը հայտարարեց Համսիկը թույլ ձայնով, վերմակով փակելով գլուխը: Այս թաթիկները ծնված են բեմի համար, - ասաց նա ու հանեց վերմակի տակից պուճուրիկ վերջույթը:

- Անտառում բեմ չկա, այստեղ միայն վայրի կենդանիների խիստ ողջ մնալն է: Իսկ ողջ կենալու համար դու պետք է պատրաստ լինես դժվարություններին, - հակառակվեց Ջումբոն: - Հագիր քո շորտիկը ու գնանք մեզ հետ: Այս արկածը օգտակար կլինի ու կկոփի քո թաթիկները:

- Ի՛նչ դժվար է կյանքը, - պատասխանեց Համսիկը, քաղցր ձգվելով: Դե ի՛նչ, սկսենք հարմարվել շրջակայքին:

Համսիկը հագավ արդեն մեծոտ շորտիկը ու գնաց ընկերների հետ:

Մոտ կեսօրին ընկերները գնացին անտառաեզրը: Նրանց ճանապարհում էր մորաքույր Քերուշիկը, Աղվանիկի մայրիկը: Նրան Քերուշիկ էին անվանում այն պատճառով, որ նա քերում էր Աղվանիկին, Դեղձիկին ու Փուսիկին շատ կոպիտ ճիլոպներով ու խոզանակներով, ու երեխաները միշտ աղեկտուր ճվճվում էին լողանալու ժամանակ ամբողջ գյուղով մեկ: Իսկ հիմա, երբ Դեղձիկն ու Փուսիկը կորել են անտառում, կոպիտ ճիլոպներից տառապում էր միայն Աղվանիկը:

Հասնելով անտառաեզրին ընկերները թաքնվեցին մի փոքր ծառի ետևում ու սկսեցին հետևել մաճկալների աշխատանքին – նրանք երկուսով էին: Գյուղացիները, երկար աշխատելուց հետո, հոգնեցին ու որոշեցին ճաշի ընդմիջում անել:

Չարձակելով լծից ձիուն, մաճկալները նրա համար մի դույլ ջուր դրեցին ու խոտ, իսկ իրենք գնացին ճյուղատարած կաղնու ստվերը: Ճաշից հետո գյուղացիները որոշեցին մի քիչ պառկել հանգստանալ ու, քաշելով ծղոտե բոլորագլխարկները ճակատներին, հարմարվեցին կարճ քնի համար:

Մկնյակներն ու Համսիկը կամացուկ մոտեցան խոտը խաղաղ ծամող ձիուն: Դա ծեր մոխրագույն զամբիկ էր նիհար կողերով, դարչնագույն պուտիկներով: Մկնյակները բարձրացան կենդանու վրա, բարձրացնելով իրենց ետևից Համսիկին, ու սկսեցին մտածել, թե ինչպես է պետք ղեկավարել նրան: Ձին, զգալով իր վրա ինչ-որ գազանների սողում, տագնապեց, ականջները սեղմեց գլխին ու դադարեց ծամելը:

- Աղվանիկ, ի՞նչ անենք հիմա, - հարցրեց Ջումբոն:

- Ը-ը-ը-ը…ես առաջին անգամ եմ ղեկավարում այսպիսի տրանսպորտային միջոցը, - խոստովանեց Աղվանիկը, որը գաղափա՛ր չուներ, թե ինչ անի հիմա:

- Միգուցե ձիուկին հրամա՞ն տալ, - զգուշորեն առաջարկեց Չլմփիկը:

- Հենց այդպե՛ս: Չէ՛ որ նրան ինչ-որ ձևով ասում են, ինչ անել, գնալ թե կանգնել, - ավելացրեց Զումբոն:

- Ես այսպես եմ հասկանում, որ հրամանը պետք է տալ նրա ականջի մեջ, - քորելով ծոծրակը, ենթադրեց Աղվանիկը: - Բայց քանի որ այս ձին ունի երկու ականջ, - զննելով զամբիկին, ավելացրեց Աղվանիկը, - ապա անհրաժեշտ է երկու օպերատոր. մեկը ձախ ականջի համար, մյուսը՝ աջ:

- Այսպիսով, ձին, ստանալով հրամանը ձախ ականջի մեջ, կթեքվի ձախ, աջ ականջի մեջ՝ աջ, - ըմբռնեց միտքը Զումբոն, սողաց ձիու գլխով նրա վզին ու նստեց ձախ ականջի մոտ:

- Ինձ թվում է՝ սա կարող է ավարտվել անուղղելի ողբերգությամբ, - ձայն տվեց Համսիկը: Մեզ համար առաջին հերթին:

- Մի՛ վախեցիր, հիմա դու կտեսնես, թե ինչպես են հաղթահարում դժվարությունները անտառի բնակիչները, - հանգստացրեց նրան Չլմփիկը:

Ձին տագնապեց ու մանր դողացնում էր ամբողջ մարմնով, ինչպես շոքեմեքենան սկզբնակետում, ու նկարը ամբողջացնելու համար պակասում էր միայն գոլորշին նրա քթանցքներից:

- Գերազա՛նց: Ես կլինեմ աջ ականջի օպերատորը, դու, Զումբո՝ ձախինը, իսկ դու, Չլմփիկ, կլինես առաջ գնալու օպերատորը, - գոռաց Աղվանիկն ու նստեց աջ ականջի մոտ:

- Իսկ ո՞ւր են այս ձիու արգելակները ու ինչպե՞ս նրան կանգնեցնել, - գոռաց, անհանգստանալով, Չլմփիկը:

Բայց նրան արդեն ոչ-ոք չէր լսում, որովհետև Աղվանիկն ու Զումբոն, «մեկ-երկու-երեք» հաշվելով միաժամանակ գոռացին «գնա՛ց» ձիու երկու ականջների մեջ, որը չնայած նրան, որ պատրաստ էր ամեն ինչի, բայց այսպիսի՛ ցնցումը դժվար եղավ հաղթահարել: Անսպասելիությունից ծեր զամբիկը հանկարծ արագորեն սլացավ վեր, խրխնջաց ու պոկվեց դեպի առաջ: Ձիուն կպցրած գութանը մխրճվեց հողի մեջ ու, վարելով մոտ տասը մետր, նորից դուրս պրծավ հողից, ասես դելֆինը ջրից: Ձին, վախից խենթացած, սրընթաց վազեց ձորակի լանջով, իսկ մկնյակները նվաղեցին այդքան արագ հողի վարելուց: Թռթռալով ձիու վրա, ինչպես հեծյալներ, նրանք շուտով ուշքի եկան ու սկսեցին գոռալ, որպեսզի ձին կանգ առնի:

- Ձիուկ, կանգնի՛, - գոռաց Աղվանիկը ձիու աջ ականջին:

- Կանգ առ, ո՞ւմ են ասում: Հե՛յ: Կա՛նգ առ, - գոռաց լեղաճաք եղած Զումբոն ձախ ականջի մեջ:

- Եղբայրնե՛ր, կանգնեցրե՛ք ձիուժը, - սարսափից կլորացած աչքերով սվսվաց Չլմփիկը: Համսիկը ձայն չէր հանում, թաթիկներով կառչած ձիու բաշից ու ամբողջ իր տեսքով արտահայտելով սկեպտիկ վերաբերմունքը անտառի բնակիչների դժվարությունները հաղթահարելու կարողությանը :

Ձին վազում էր դեպի վար ձորակի լանջով, հա ավելացնելով արագությունը: Գութանը ինչպես անօգուտ երկաթի կտոր թռնում էր զամբիկի ետևից ու կենդանի էակի պես հնձում էր խոտը, թփերը ու ջահել ծառերը մինչև արմատ, թողնելով իրանից հետո մի ծուռ կածան: Հանկարծ, կպնելով մի հսկա ծառի գութանը պոկվեց ու կախվեց մեծ ճյուղերից մեկի վրա: Դրանից ձին իրեն թափ տվեց ավելի ուժեղ, ու մկնյակները վար թափվեցին, ինչպես շատ հասած միրգը ծառից: Վազելով էլի մի քանի տասնյակ մետր ձին կանգ առավ, խռռոց արձակելով ու ամբողջ մարմինը դողացնելով: Խոտերում պառկած մկնյակներն ու Համսիկը տեսան, թե ինչպես ձորակի լանջով վազում են մանճկալները դեպի զամբիկը, ու շտապեցին պախկվել մոտակա թփերում: Գյուղացիները մոտ վազեցին ձիուն, զննեցին նրան ու տարան ետ, ասելով, որ միգուցե բոռ է կծել ու նա վազել է հանկարծակի ցավից դրդված: Բայց դեռ չէին անցել նույնիսկ հինգը քայլ, երբ նկատեցին ծռռումուռ խորը առվափոսում, որը թողել էր գութանը, ինչ-որ դեղին ու փայլփլող առարկա սև, թանձր հողի գնդերի միջև: Մանճկալները կռացան ու զարմանքով հայտնաբերեցին ոսկե ու արծաթե մետաղադրամներով լցված մի ջարդված կավե կուժ: Գյուղացիների ուրախությանը վերջ չկա՛ր: Նրանք սկսեցին թռչկոտել ուրախությունից ու գրկել իրար, վերև էին գցում գլխարկները ու համբուրում էին ձիու քրտնած վախեծած մռութը: Ձին թափահարում էր

գլուխը և հաստատորեն չէր հասկանում, թե ինչու մաճկալները ուրախանում են նրան նախատելու փոխարեն ինքնագլուխ ձորակի լանջը վարելու համար:

Աղվանիկը, Ջումբոն, Զլմփիկն ու Համսիկը մի քիչ էլ մնացին թաքստոցում, նայելով, թե ոնց են ուրախանում մաճկալները, ու, տնքալով ցավից, շոշափելով կապտուկներն ու ելունդները, ոտքերը քարշ տալով գնացին դեպի գյուղակը: Այդ ընթացքում Աղվանիկը ապացուցում էր ընկերներին, որ Զլմփիկը սխալ էր «միացրել ձիու արագությունը», ինչով առաջ բերեց ընկերների մոտ դժգոհության մի ամբողջ մրրիկ, ու նրանք նույնիսկ ուզում էին Աղվանիկին ծեծ տալ, բայց շուտով հաշտվեցին ու արդեն մի քանի րոպեից հետո ուրախ ծաղրում էին իրար, իրենց անվանելով «հաջողության ձիավորներ», քանի որ վերջնականապես վարը  հաջողվեց գերազանցապես:

- Միայն թե ափսո՛ս, - տրտնջում էր Աղվանիկը, - որ գյուղացիները այդպես էլ չեն իմանա, թե շնորհիվ ում նրանք գտան գանձերը:

### *ГлаваԳլուխ 11.* Համսիկն ու Ռոզիկը վերադառնում են տուն

Անցավ մի քանի շաբաթ այն պահից, երբ գյուղում հայտնվեցին Համսիկն ու Ռոզիկը, ու մկնյակները շա՜տ էին ուրախ նոր բնակիչնեչին: Համսիկը, որը բնական շնորհք ուներ ուրախացնելու բոլոր ցանկացողներին, միշտ ներկայացումներ էր կազմակերպում ու գիտեր անսահման քանակությամբ ֆոկուսներ, իսկ Ռոզիկը պարեկում էր օդում գյուղի վրա ու հաղորդում էր ավագներին, թե ինչ է տեղի ունենում ավանի շուրջ բոլորը: Սակայն անվրդով կյանքը երկար չտևեց: Մի անգամ առավոտյան մկնյակներից մեկը հաղորդեց, որ տեսել է անտառաեզրին մի աղջկա, որը ման էր գալիս անտառով մեն, լացում էր ու կանչում էր իր կորած ընկերներին – Համսիկին ու Ռոզիկին: Նրա հետ էին հայրիկն ու մայրիկը, ու նրանք էլ էին փնտրում համստերին ու թութակին:

- Վա-ա-այ, - տնքաց Համսիկը, նստեց խոտին ու սկսեց տրորել սիրտը: - Բացվեցին հին հոգեկան վերքերը: Ռոզիկ ջան, ի՛մ ընկերուհի, ի՞նչ ենք անելու:

Ռոզիկը թոթվեց ուսերը:

Տոհմը հավաքվեց խորհուրդի: Խոսք վերցրեց Շլըմփը: Նա երկար կանգնեց մտածմունքի մեջ, հենվելով ձեռնափայտին, իսկ ոտքերը, նրանից անկախ, կատարում էին մագնիսային դաշտի պարը: Վերջերս  Շլըմփը շատ փորձեր էր արել ու հիմա լավ ֆիզիկական վիճակում էր, ու նույնիսկ պլանավորում էր անց կացնել պարի փառատոն ամառվա կեսերին:

- Քանի որ Ռոզիկն ու Համսիկը դարձել են մեզ հարազատ ու մեր տոհմի իրավահավասար անդամներ են, ապա նրանք ինքնուրույն պիտի որոշեն - մնալ թե գնալ մարդկանց մոտ, - վերջապես արտասանեց Շլըմփը: - Անձամբ ես ձեր պակասությունը կզգամ, - ավելացրեց առաջնորդը ու նրա աչքերում արցունքներ երևացին: Համսիկը, լսելով նրա խոսքը, նույնպես առցունք թափեց: Մկնյակների ամբողջ տոհմը աղմկեց, լսվեցին բարձր ձայներ. «Թո՛ղ մնան» ու «Մեր տունը ձեր տո՛ւնն է»:

Համսիկը թափահարեց կապույտ թաշկինակը, որը, ասես հրաշք, հայտնվեց նրա թաթիկում, ու խնդրեց բոլորին լսել նրան.

- Շնորհակա՛լ ենք, շնորհակա՛լ ենք, ընկերներ: Որոշումը այնքան էլ հեշտ չե, այնպես որ մենք Ռոզիկի հետ կխորհրդակցենք մինչև առավոտ:

Մյուս օրը, երկար ժամերի մտորումներից հետո, թութակն ու համստերը, այնուամենայնիվ, որոշեցին վերադառնալ: Նրանք երկար հրաժեշտ էին տալիս, գրկելով տոհմից ամեն մեկին:

- Համսիկ, հիմա դու կլինես մեր համստեր-հետախույզը մարդկանց մեջ, կապող օղակը, - իր հույսը հայտնեց Շլըմփը, գրկելով թմբլիկ ընկերոջը:

- Ես կլինեմ լավագո՜ւյն համստեր-հետախույզը պատմության մեջ, - հուսադրեց Համսիկը: Դե ամեն դեպքում՝ ամենասրամիտն ու իմ սեփական ոճով:

- Ռոզիկ, լա՛վ նայիր Համսիկին - բարի երթ մաղթեց թութակին Շլըմփը: Ռոզիկը զուսպ կերպով գլխով արեց:

Մկնյակների հետ նրանք մեկնեցին անտառաեզրը: Ոչ մի մարդ արդեն չկար, սակայն մարդու հետքեր - բազում քանակությամբ: Սպասելով, որ մարդիք կվերադառնան,  գազանիկները

գիշերեցին անտառում, երկար ժամանակ նստած մի փոքր խարույկի մոտ ու հիշելով իրենց արկածները: Իսկ առավոտյան մարդիք եկան ու նորից սկսեցին կանչել Ռոզիկին ու Համսիկին:

- Համոզված եմ՝ մենք հրաժեշտ չենք տալիս, - բացականչեց համստերը, հերթով գրկելով ընկերներին: Հետո բոլորին գրկեց Ռոզիկը:

- Դու հիմա իսկական անտառի գազան ես, մի՛ մոռացիր դրա մասին ու մի՛ վախեցիր անտառից, - խրատեց Ջումբոն հեռացող համստերին:

- Բարևեք ձկնիկներին, - գոռաց Աղվանիկը:

Համստերը շուռ եկավ ու հրաժեշտ տալով թաթիկը վեր բարձրացրեց, իսկ Ռոզիկը թևը թափահարեց: Մի քիչ անց նրանց նկատեցին մարդիք, աղջիկը, ուրախ ճչալով, գցվեց իր սիրելիների մոտ, վերցրեց ձեռքերի մեջ, ներողություններ խնդրելով, ու սկսեց նրանց գրկել: Մկնյակները մի քանի րոպե դիտում էին միացման տեսարանը, իսկ հետո, երջանկացած, հեռացան անտառի խորքը:

### *Գլուխ 12. Նոր անախորժություն թյունիկների հետ*

Բոլորը կամաց-կամաց մոռացան թյունիկների հետ անախորժության մասին: Մկնյակները չէին հիշաչար կամ ագրեսիվ, այդ պատճառով համերաշխ ապրում էին անտառի մնացած բնակիչների հետ: Եթե պատահում էին անախորժություններ, որոնք չէր հաջողվում հարթեցնել, ապա ամբողջ ցեղը միանում էր իրար ու ներկայացնում էր իրենից մի ահեղ ուժ: Չլինելով առանձնապես մեծ, արագաշարժ ու ճարպիկ, կռիվներում մկնյակները հաղթում էին շնորհիվ գործողությունների միասնությանը, կարգապահությանը ու թիմային ոգուն: Սրընթաց մարտական մեքենայի պես գլորվում էին նրանք հակառակորդի վրայով, ստիպելով նրան նահանջել: Մի քանի լավ ղնգստոցից հետո նույնիսկ ամենախոշոր ու վտանգավոր գազանները գերադասում էին ավելորդ անգամ գործ չունենալ մկնյակների հետ: Իսկ հիմա անտառում հայտնվեց ևս մի տոհմ, որը իր միասնականությամբ ոչ միայն չէր զիջում մկնյակներին, բայց, միգուցե նույնիսկ գերազանցում էր նրանց:

Թյունիկները հիշեցրեցին իրենց գոյության մասին, երբ գյուղակ վազելով եկավ, ամբողջովին կապտուկների ու արցունքների մեջ, մկնյակ Սրիկը: Սրիկը միշտ առավել կռվարար էր ու չափազանց հպարտանում էր իրենով, իսկ բոլոր մկնյակներին բաժանում էր խելացիների, այսինքն՝ «սրիկների», ու բթերի՝ «բթուկների»: Ինքն իրեն, պարզ է, Սրիկը համարում էր շատ էլ «սրիկ»: Մի անգամ նա հեծանիվ պատրաստեց ու կոչում էր ինքն իրեն «կայծակ անիվների վրա», բայց նրանից հետո, երբ նա դոփեց ծառին, տոհմը սկսեց անվանել նրան «հեծա-բթուկ»:

Իսկ հիմա Սրիկը, հեկեկալով ու քսմսելով արցունքները թշերին, պատմում էր, որ թյունիկները վրա տվեցին նրան, խլեցին բոլոր անհամար զանձերը, որ նա տանում էր գյուղակ, ծեծկրտեցին ու ծիծաղելով քշեցին:

Տոհմը շատ էր կասկածում, որ Սրիկը կարող էր որևէ արժեքավոր բան բերել, ու չէր հավատում, որ նա ունակ էր հիմնակազմիչ երկխոսություն կառուցել ոչ միայն թյունիկների հետ, բայց ինչ-որ մեկի հետ ընդհանրապես: Սակայն արձագանք չտալ նման արարքին ուրիշ տոհմի կողմից մկնյակները չէին կարող: Հարց առաջացավ՝ ինչպես գտնել նեղացնողներին:

Աղվանիկը, Ջումբոն ու Չլմփիկը ցանկացան հետախույզ դառնալ: Հեկեկացող Սրիկը ուղեկցեց նրանց բացատ, որտեղ, ըստ նրա խոսքերի, նա ստացավ բացառապես չվաստակած ու ոչինչով չդրդված կռուփներ թյունիկների կողմից: Մի փոքր չհասցնելով մկնյակներին դեպքի տեղը, Սրիկը թաթիկով ցույց տվեց ինչ-որ բարձր թփուտի կողմը ու շտապ հեռացավ գյուղ, պնդելով, որ նրա մոտ խորը հոգեկան ցնցում է ու նրան հոգեպես դժվար է գտնվել այստեղ: Հենց որ փոշու ամպը, որը բարձրացել էր տուն վազող Սրիկի թաթիկներից, վերացավ ու մնացած մկնյակները վերջացրեցին փռշտալ ու սրբեցին աչքերը, սկսվեց ռազմական գործողությունների տեղայնքի զննումը:

- Շատ մեր հետքերին նման հետքեր կան - նկատեց Չլմփիկը, նշելով լավ երևացող կնիքները ճմրթված խոտի մեջ ու համեմատելով իր թաթիկի հետ:

- Մի շղթան տանում է մեր գյուղի մոտ, մնացածը՝ թավուտ, - ավելացրեց Չլմփիկը:

- Մենք երբե՛ք այսքան հեռու չենք հասել այն ուղղությամբ, - մտամոլոր արտասանեց Աղվանիկը:

Խիզախ մկնյակները, ճյուղերով ու տերևներով ծածկված, որպեսզի աննկատելի լինեն, գնացին հետքերով: Մեկ-մեկ թաթերի հետքերը կորում էին, սակայն ընկերները նորից էին գտնում ուղղությունը ըստ ջարդված ճյուղերի ու թույլ օտար հոտի օդում: Վերջապես, հաղթահարելով խիտ թավուտը ու անցնելով ջրառատ վտակը, ընկերները հայտնվեցին հովտի վայրէջքի մոտ: Բարձրանալով հարևան թմբի վրա նրանք զգուշորեն մոտ սողացին գագաթին ու տեսան ներքևում սփռված մի գյուղ: Նա գտնվում էր բարեհարմար տեղում, շրջապատված բլուրներով ու խիտ անտառով: Գյուղակը շատ էր հիշեցնում մկնյակների ավանը տնակների դիրքով ու կառույցների ընդհանուր տեսքով:

- Իսկ նրանց մոտ մարդաշա՛տ է, - հիացած շվշվացրեց Չլմփիկը: Ու իսկապես, հովիտը լիքն էր գազանիկներով, շատ նման մկնյակներին:

- Այս գյուղակը ես տեսել եմ դիտակով օդապարիկից, ու ես գիտեմ բոլոր մատույցները դեպի նա, - հայտարարեց Զումբոն, ում արկածային ոգին արդեն մարտի ծարավ էր:

- Իսկ միգուցե միայն իջնենք ու զրուցե՞նք նրանց հետ, - առաջարկեց Աղվանիկը:

- Ո՛չ, այդպես հետաքրքիր չի,- հակառակվեց Զումբոն:

- Ոչ-ոք չշարժվի, խոսացող թփեր, - լսվեց հանկարծ նրանց մեջքի ետևում: - Բարձրացրեք ճյուղերը այնպես, որ մենք տեսնենք նրանց:

Գերբակալվածներին դուրս բերեցին բացատ, ջրի երկու կաթիլի պես նման մկնյակների գյուղի ժողովների կենտրոնական բացատին: Այնտեղ նրանց, վերջապես, թույլ տվեցին շուռ գալ ու շարժվել:

- Վա՜յ, վաղեմի ընկերուհինե՛ր, - բացականչեց Զումբոն, հանելով իր վրայից ճյուղերը: Նրանց ուղեկցող պահակները Կվասուլիկը, Մաքսաիկն ու Կուկվիմբն էին:

Կվասուլիկը, կասկածանքի հայացք գցելով մկնյակնեի վրա, անմիջապես ինչ-որ տեղ վազեց, բայց շուտով վերադարձավ մի տարեց, բոյով թյունիկի հետ: Նրա գլուխը զարդարում էին վեհանձն պևեհր մազերը ու թագը, որը շատ էր նման Ծլըմփի թագին:

- Բարև ձեզ, եկվորներ, - զիլ ձայնով ասաց թյունիկը: - Ես առաջնորդ Քրյամսն եմ, այս տոհմի գլուխը:

- Իսկ նա ավելի լավ վիճակում է, քան Ծլընփը, - նկատեց Զումբոն:

- Բարևնե՛րս, առաջնո՛րդ - բարև տվեցին մկնյակները:

- Լավ անուն ունեք, գովեց … Չլմփիկը:

- Շնորհակա՛լ եմ, - գլխով արեց Քրյամսը: - Իմ դուստր Կվասուլիկը ասում է, որ դուք արդեն հանդիպել եք ավելի շուտ, ու ծանոթությունը այդքան էլ հաջող չի եղել:

- Դե այդ հարցում դժվար է հակաճառել, - գլխով արեց Աղվանիկը:

- Ինչո՞ւ էիք մեզ հետևում, - հարցրեց առաջնորդը:

- Այսօր առավոտյան դուք վրա եք տվել մեր տոհմից մեկին ու յուրացրել նրա գանձերը, - պատասխանեց Աղվանիկը:

- Սո՛ւտ է, - ձայն լսվեց բազմության միջից, - նա առաջինը սկսեց:

Այո, նրա ձեռքում ինչ-որ պուճուրիկ գեղեցիկ իր կար, հետո տեսավ, որ երկու թյունիկ ավան են տանում մատանի ու փայլող մետաղադրամ, ու փորձ կատարեց խլել: Այդ պատճառով գանձը կմնա մեզ մոտ: Դուք ազատ եք վերադառնալու ձեր կռվարար տոհմակիցների մոտ, ու եթե որոշեք պատերազմել, ապա այդպես էլ կլինի:

Մկնյակներին ազատ թողեցին, ու մինչև արևամուտը նրանք հասան իրենց գյուղը: Ճրագների ու մոմերի լույսի տակ մկնյակների տոհմը հավաքվեց քննարկելու կատարվածը ու որոշելու, թե ինչ է պետք անել:

Կարծիքները, ինչպես միշտ, տարբեր էին: Ինչ-որ մեկը գոռում էր, որ պետք է փոխհատուցում տալ, ու ժամանակն է թյունիկներին դաս տալ, մյուսը պահանջում էր բանակցություններ անց կացնել հարևան տոհմի հետ, իսկ երրորդը ընդհանրապես ոչինչ չէր ուզում ու առաջարկում էր ապրել ինչպես ապրում էին մինչ այդ դեպքը, առանց ուշադրություն դարձնելու օտարներին: Այս երեկո, այնուամենայնիվ, ամենաաղմկոտ խումբը եղավ կռվի կողմնակից - շատերը ծայրահեղ ջղայնացած էին թյունիկների անպատկառության հաշվով, իսկ մյուսները, պարզապես, արկած էին փնտրում: Մեծամասնության ճնշման տակ Ծլըմփը, որ թյունիկների հետ խաղաղ բանակցությունների կողմնակից էր, ստիպված էր ենթարկվելու:

- Դուք ուզում եք կռվե՞լ, - շատ ուժեղ գոռաց նա, որպեսզի լսելի լինի բազմության աղմուկի մեջ: Լա՛վ, բայց դուք դա կանեք այնպես, ինչպես ե՛ս կասեմ, եթե ուզում եք հաղթել: Ու առանց վնասվածքների, կապտուկների ու չանգռտոցների: Մենք միայն կվախեցնենք թյունիկներին:

### *Գլուխ 13.* Հրթիռա-զազե հարձակում ու Օդա-Երշիկային Ուժեր

Մկնյակների հանդերձանքը կազմված էր ռազմական կարմիր շորտիկներից, կարմիր բաճկոնիկից, նաև եղեգնափայտիկների ու հատապտուղների պաշարից: Հատապտուղը մտցվում էր եղեգնափայտիկի մեջ, մկնյակն լիքը օդ էր հավաքում թշիկների մեջ, ամբողջ ուժով փչում էր, կրակելով հատիկը ինչքան հնարավոր է հեռու և ուժեղ: Պահանջվում էր ահռելի համբերություն, որպեսզի հատապտուղը փչել հնարավորին չափ խորը եղեգնափայտիկի մեջ ու հավաքել ինչքան հնարավոր է շատ օդ, կանգնելով հակառակորդի առաջ, այդ պատճառով մկնյակները կանոնավորապես մարզվում էին այդ ուղղությամբ: Այդ մկնյակներին համատոհմայինները կոչում էին հատիկփչող:

Մկնյակներն ունեին նաև մեծ երկճիղ փայտիկներ, որոնց մեջ դնում էին սոճու կոներ ու դրանցով կրակում հակառակորդի վրա: Այդպիսի երիզը ձգելու համար պահանջվում էր երկու-երեք մկնյակների ջանք: Այդ մկնյակներին անվանում էին կոնախփողներ:

Եվ այսպես, մկնյակների բանակը սկսեց արշավը, փչելով շվիները ու որոտացնելով դհոլները: Թավուտի առաջ բանակը բաժանվեց մասերի, ու ջոկատը սկսեց շրջանցել դաշտը աջ կողմից:

- Մենք հաղթելո՛ւ ենք, - գոռում էին մկնյակները ու երգում էին ռազմական երգեր:

Հիմնական ուժերը շարժվեցին առաջ Շըլմփի ղեկավարությամբ: Նա թողեց իր հպատակների մի մասը բարձունքի գագաթին, որոնք սկսեցին բարձր աղմկել ու կռվի կանչել թյունիկներին: Երկար համոզել պետք չեղավ, ու Քրյամսի զորքը, հագած կապույտ շորտիկներ ու բաճկոնիկներ, իրենց եղեգնափայտերով ու երկճիղ փայտիկներով ուսերին, դուրս եկավ գյուղից: Թյունիկները շուտ բարձրացան բլուր, հատիկը եղեգնափայտիկից գցելու հեռավորության վրա, ու սկսեցին բավականին հաջողակ շպրտել հատիկների արկերը մկնյակների փոքրաթիվ առաջավոր ջոկատի վրա: Բայց ահա Շըլմփը մոտեցրեց հիմնական ուժերը, ու սկսվեց ոչ կատակ կռիվ հատապտուղներով ու կոներով: Երկու բանակը իրար դեմ դնչիկներ էին ձևացնում, սվսվացնում, աղմկում, գոռգոռում:

Շըլմփի ծերուկը, չնայած նրան, որ վաղուց երիտասարդ չէր, սակայն շատ լավ հրամանատար էր - դա ընդունում էին տոհմի բոլոր անդամները: Անցնելով բազմաթիվ կռիվների միջով, Շըլմփը փորձառու էր, հեռատես ու սառնասիրտ:

- Եվ այսպես, սկսեց իր խոսքը թագավորը, գծելով հողի վրա ձողիկի օգնությամբ թյունիկների ավանի քարտեզը ու մոտակա հողամասերը, որ մինչ այդ տեսել էին Աղվանիկը, Ջումբոն ու Չըմփիկը: - Մենք չենք գրոհի գյուղը, որովհետև նա լավ պաշտպանվում է ու նրա մեջ հեշտ է պաշտպանվել: Մենք կստիպենք նրանց զորքը դուրս գալ մեր դեմ, տեղադրելով բլրի վրա մեր զորքերի փոքր մասը: Երբ մեր փոքրամասնությունից խաբնված թյունիկները կսկսեն բարձրանալ բլուր, մենք պայքարի մեջ կմտնենք մեր ուժերի երեք քարորդով ու կշեղենք նրանց ուշադրությունը: Այդ ժամանակ ոչ մեծ խումբ կիջնի պարանների վրայով բլուրներից կռվի տեղից հեռու ու վրա կտա հակառակորդին կողքից:

- Ո՞վ է ուզում հետախույզ լինել, - թագավորի հայացքը շրջեց բոլորի վրայով:

Այդ ծամանակ Աղվանիկը թաթիկով պաշտպանվում էր մեղվից, որը թռչում էր նրա շուրջը: Շըլմփ թագավորը հասկացավ Աղվանիկի թաթերով թափահարելը որպես հերոս-հրթիռավար դառնալու ցանկություն:

- Աղվանիկ, - հանդիսավոր կերպով հայտարարեց թագավորը, - ես քեզ նշանակում եմ լինել օդաչու-հետախույզ ու հնարավորություն եմ տալիս անց կացնել օդային արագ հետախուզություն: Չնենզե՛ս մեզ:

- Հենց այդպե՛ս, իմ թագավոր: Իսկ ինչպե՞ս ենք անց կացնելու հետախուզությունը, - հարցրեց Աղվանիկը, ոչինչ չհասկանալով ղեկավարի ճառից մեղվի պատճառով:

Շըլմփ թագավորը հոգոց քաշեց ու, մտածելով, բարբառեց.

- Ես հիշում եմ մեր նախնիների ասույթը, նրանք ասում էին. եթե վերցնել մի շիշ քաղցր գազի ջրով ու ավելացնել դաղձի հաբ, ապա երկու վայրկյանից շշից դուրս կպրծնի հզոր գազե շիթ:

Եթե մենք կապենք հետախույզ-օդաչու-հրթիռավարին շշին, ապա այդ շիթը ի վիճակի է օդ բարձրացնել համ շիշը, համ էլ օդաչու-հրթիռավարին:

- Ես շշի վրա՞, - սփրթնեց Աղվանիկը ու քցվեց ծնկների վրա թագավորի առաջ: - Ես վախենում եմ՝ հանկա՞րծ շիշը պայթի:

- Ամեն ինչ լա՛վ կլինի, - ոգեվորեց նրան թագավորը: - Հերո՛ս ես լինելու:

Զումբոի, Զմփիկի ու ուրիշ մկնյակների քմծիծաղի տակ Աղվանիկը, գլուխը կախած, գնաց հավաքելու հանդերձանքը:

Հինգ րոպեից հետո ամեն ինչ պատրաստ էր. գազի ջրով շիշը դրված էր բարձունքի վրա, Աղվանիկին կապեցին շշին ու պատրաստվեցին գցել մեջը դաղձի հաբը:

- Նայեցե՛ք, թյունիկները օդապարիկ են բարձրացրել, - հանկարծ աղաղակեց մկնյակներից մեկը, ցույց տալով երկինքին:

Ամբողջ տոհմը բաձրացրեց աչքերը դեպի վեր. երկնքում դանդաղ լողում էր օդով լցված երշիկի պատյան, որին կապած էր զամբյուղ թյունիկով: Քանի որ պատյանը վերցված էր երկար երշիկից, թվում էր, որ երկնքում լողում է իսկական երշիկ:

- Հա-հա-հա, - հռհռացին մկնյակները: - Միայն թե տեսե՛ք, թյունիկները արդեն ունեն ՕԵՈՒ - Օդա-Երշիկային Ուժեր: Ա՛յ հիմա թյունիկները հաստա՛տ մեզ կհաղթեն իրենց երշիկա-սարդելային օդապարիկներով:

Երշիկային օդապարիկի տեսքը այնքա՛ն ծիծաղելի էր ու զարմանալի, որ կողքով թռչող ագռավի աչքը մնաց նրա վրա ու նա դոփեց սոճուն այնքան ուժեղ, որ թափվեցին փշերն ու կոները:

Երշիկային օդապարիկի զամբյուղից դուրս նայեց Կվասուլիկը, նայեց ներքև մկնյակների զորքերի դիրքին ու սկսեց հաղորդել տեսածը իր համատոհմայիններին, թափահարելով երկու ազդանշանային կարմիր դրոշակներով:

- Նա հետախո՛ւյզ է, - վնգստաց մկնյակներից մեկը: Ի՛նչ խարդավա՛նք: Նա նայում է վերևից մեր զորքերի վրա:

- Շտա՛պ կապեցե՛ք Աղվանիկին ու գործի գցեք մեր հետախույզին, - ի պատասխան աղաղակեց ինչ-որ մի ուրիշ մկնյակ:

Աղվանիկը ավելի շատ սփրթնեց, սակայն իրեն հաստատապես էր պահում: Մկնյակները գցեցին դաղձի հաբը շշի մեջ ու շուտ փակեցին:

- Ե՞րբ բացենք շշի բերանը, թագավոր, - հարցրեցին նրանք Շլըմփին:

Շլըմփը հանեց թագավորական թիկնոցի տակից ավազի ժամացույցը ու մտամոլոր աչքերը հառեց նրանց վրա, շարժելով շուրթերը:

- «Երեք» հաշվին բացե՛ք, - հրամայեց Շլըմփը: - Մե՛կ…Երկո՛ւ…

Ամբողջ տոհմը շունչը պահեց, իսկ Աղվանիկը կամաց տնքաց վախից ու հանկարծ ուշքի եկավ:

- Սպասե՛ք, իսկ ես ինչպե՞ս կվերադառնամ գետին երկնքից: Դուք այդ մասին մտա…

- Երե՛ք, - բղավեց Շլըմփը ու թաթով նշան տվեց:

Մկնյակները բացեցին խցանը, ու հզոր շիթը ուժեղ աղմուկով ու Աղվանիկի աղեկտուր ճչով տարավ գազի հրթիռը վերև, նախապես շփելով շուրջը կանգնած մկնյակներին քաղցր փրփուրով:

- Իսկապես, ինչպե՞ս Աղվանիկը կիջնի երկնքից գետին, - հարցրեց Զումբոն: Բայց նրան ոչ-ոք չլսեց:

Մինչ այդ գազե հրթիռը Աղվանիկի հետ միասին սկսեց իր շարժումը ծուռ զալարագծով - հենց Կվասուլիկի օդապարիկի վրա:

Թյունիկները տեսան գազե հրթիռը Աղվանիկի հետ, անհանգստացան, սկսեցին գոռալ, թափահարել թաթիկներով ու գրավել Կվասուլիկի ուշադրությունը: Բայց Կվասուլիկը չափազանց տարված էր հետախուզության տվյալների հաղորդումով ու նկատեց վտանգը միայն երբ հրթիռը Աղվանիկի հետ քիփ մոտեցել էր:

Կվասուլիկը վայր գցեց դրոշակները, սարսափից փակելով մռութիկը թաթիկներով, գազե հրթիռը որոտալով մխրճվեց երշիկ-օդապարիկի մեջ, փոկերը, որոնց օգնությամբ Աղվանիկը կապված էր գազե ջրի շշին, տրաքեցին, ու մկնյակը ներս թռավ զամբյուղի մեջ ու ընկավ ուղիղ Կվասուլիկի ոտքերի առաջ: Նա չհասցրեց չարախնդորեն հետաքրքրվել, թե ինչը բերեց չսպասված հյուրին իր օդապարիկի զամբյուղը, երբ երշիկե փուչիկը, հարվածից վնասված, սկսեց արձակել

օդի  շիթ, զամբյուղը խիստ կողքի թեքվեց, ինչի պատճառով Կվասուլիկը համարյա թե դուրս էր ընկնում նրա միջից, հասցնելով կառչել արտաքին ծայրից երկու թաթիկով:

- Վա՜յ, մայրիկ, փրկեցե՜ք ինձ, - աղեկտուր գոռաց Կվասուլիկը:

Մկնյակների ու թյունիկների տոհմերը սարսափահար սառել էին ու, շունչը պահած, նայում էին, թե ինչպես երկնքում վնասված օդապարիկից անդունդի ծայրին կախվել է Կվասուլիկը ու աղեկտուր ճչում է, գալարվելով ամբողջ մարմնով ու փորձելով ետ մտնել զամբյուղ:

Հենց Կվասուլիկի ճչոցը սթափեցրեց Աղվանիկին, հակառակ դեպքում նա դեռ երկար ժամանակ ուշքի պիտի գար այսպիսի հարվածից հետո: Մի ակնթարթում մոտ վազելով զամբյուղի ծայրին, Աղվանիկը կռացավ, բայց տեսնելով հեռու ներքևում երկիրը, սարսափահար ետ զգվեց ու բռնեց կուրցքը: Սակայն Կվասուլիկը շարունակում էր մոլեգնաբար գոռալ, ու Աղվանիկը ի վերջո հաղթահարեց իր վախը: Նա նորից կռացավ, հասավ Կվասուլիկին, ու, լարվելով, ներս քաշեց նրան զամբյուղի մեջ:

Մկնյակներն ու թյունիկները ծափ տվեցին ու գոռացին ուրախությունից, տեսնելով Կվասուլիկի փրկվելը: Նա պչրանքով թափահարեց նրանց իր թաթիկով, ինչով հրճվանքի մրրիկ առաջացրեց իր համատոհմայինների մոտ: Իսկ Աղվանիկը նստել էր զամբյուղի հատակին ու դողացնում էր վերապրած վախից:

-Ա՜յ թե խիզախ: Հերո՛ս: - քննարկում էին Աղվանիկի արարքը մկնյակները, խրախուսանքով գլուխ անելով ու ճտտացնելով լեզուները հրճվանքից:

Այս բոլոր ժամանակի ընթացքում երշիկե օդապարիկի պատյանի մեջ շարունակվում էր պակասել օդի պարունակությունը, սարքը իջնում էր, ու մի քանի րոպեից հետո զամբյուղը կպավ գետնին: Կվասուլիկը դուրս պրծավ ու նազանիորեն գլուխը խոնարհեց հրճվանքից պապանձված հանդիսատեսին, իսկ Աղվանիկը շարունակում էր նստել ներսում ու դողացնել վախից: Բայց նրա ցեղակիցները  դա հասկացան որպես Աղվանիկի չափազանց  պարկեշտությունը:

- Ա՜յ թե պարկեշտիկ: Ա՛յ կեցցե՛ Աղվանիկը, - փսփսացնում էին ու իրար աչքով անում մկնյակները:

### *Գլուխ 14.* Չկայացած մարտը

Հետևելով Կվասուլիկի փրկությանը խիզախ հերոս Աղվանիկի կողմից, մկնյակներն ու թյունիկները կորցրեցին  մարտի տենչը ու էլ չէին ուզում կռվել, սակայն ստիպված էին շարունակել մարտը – թյունիկների գյուղի կողմից արդեն դուրս էին թռել բազմաթիվ օդապարիկներ, որոնց զամբյուղներում նստած էին թյունիկ-ռմբակոծիչները: Դա թյունիկներն էին, որորոնց սովորեցրել էին հակառակորդի վրա լցնել քաղցր օշարակ ու զցել կոներ: Սակայն հենց օդապարիկների տեսքը ապշեցրեց մկնյակներին ավելի ուժեղ, քան առաջին անգամ. նրանք բոլորը երշիկի, սարդելների ու տարբեր ուտելիքների պատյաններից էին:

Մկնյակները բերանները բացեցին այսպիսի անհեթեթ ռազմական տեխնիկայի տեսքից, բայց մի վայրկյանից հետո սկսեցին անբռնելիորեն հռհռալ, բռնվելով կողերից: Սակայն հաջորդ պահին մռռացան ծիծաղը - նրանց գլուխներին  լցվեց քաղցր օշարակը ու թափվեցին սոճու կոներ ու փշեր:

- Ահ, այդպե՞ս: Ա՛յ, թե դուք ո՛նց, - կատաղեցին մկնյակները ու վազեցին պատրաստելու շշերը քաղցր գազե ջրով:  Արդեն մի րոպեից հետո օդը սլացան մի քանի տասնյակ շիշ, շվշվացնելով ու թքելով քաղցր  փրփուր: Նրանք լայն կամարով թռան օդա-երշիկային փուչիկների կողքով, ու մկնյակների ու թյունիկների վրա առատորեն լցվեց քաղցր գաղե ցող: Քաղցր խոնավության առատությունից երկնքում հայտնվեցին երկու անչափ գեղեցիկ ծիածան, ու երկու տոհմերը հիացած բացեցին բերանները:

Մաբասիկն ու Կուկվիմբը, նստած երշիկե փուչիկների զամբյուղների մեջ, նույնպես հափշտակվեցին ծիածաններով ու սխալմամբ թափեցին քաղցր օշարակն ու կոները իրենց ցեղակիցների վրա - թյունիկների, որոնք անմիջապես վրդովվեցին.

- Ո՞ւր ես լցնում օշարակը, անշնո՛րք, - գոռում էին ոմանք:

- Աչքերդ բա՛ց, -  աղաղակում էին մյուսները ու թափահարում բռունցքները:

- Այ, միայն թե իջնես, ես քո ականջները կպոկրտեմ - բարկանում էին երրորդները:

Մաքասիկն ու Կուկվիմբը չլսեցին գոռոցները ու վերևից վար շպրտեցին անչափ քանակությամբ փայլուն ու գույնզգույն մանրացրած թղթիկներ, որոնցով ուզում էին երջանկացնել հաղթողներին: Սակայն դա ավելորդ եղավ - նրանք թափվեցին թյունիկների ու մկնյակների վրա, առանց այն էլ քամսված քաղցր օշարակով ու սոճու փշերով:

- Սա ավելի շատ նման է հեքիաթային ներկայացման... - փնթփնթաց թագավոր Քրյամփսը, որ կանգնած էր բլրակի վրա ու զննում էր իր ռազմիկ-թյունիկներին հեռադիտակով: - Անպարարները ծաղրածուների դեմ…

- Սա ոչ թե մարտ է, այլ կրկես-շապիտո... - վրդովված նկատեց թագավոր Ծլըմփը: - նրանց տեղը կրկեսում է, ոչ թե ռազմադաշտում: Սուտ կռիվ անողնե՛ր…

Վերջապես մկնյակներն ու թյունիկները տեսան, որ կռվելը ոչ մի արդյունք չտվեց, ու երկու կողմը ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին սպիտակ թաշկինակներով երկար փայտիկների վրա:

Խորհրդակցելով, պարլամենտարները եկան եզրակացության, որ երկու բանակն էլ այսօր լավ կռվեցին, ու կարելի է ընդունել «ոչ-ոքի», և նույնպես պայմանավորվեցին էլ չհարձակվել մեկը մյուսի վրա: Մկնյակներն ու թյունիկները հա փռթկացնում էին ծիծաղից, զննելով իրար. օշարակով ու գույնզգույն, փայլող թղթի կտորիկներով քամսված գազանիկների տեսքը ծիծաղ էր առաջացնում ու անչար կատակներ: Թյունիկները սկսեցին կարգի բերել իրենց ապրելավայրը, իսկ մկնյակները գնացին իրենց ավանը, ընդ որում ամեն տոհմը բացարձակորեն համոզված էր, որ հենց իրենք են հաղթել ու իրենց հակառակորդը, պարզապես, սկսնակներ են ռազմական գործում ու վախկոտներ: Աղվանիկին, Ջումբոին ու Չըմփիկին սպասում էր երկար ճանապահը դեպի տուն, իսկ հետո աղտոտված ու քաղցր շորերի լվացքը:

### *Գլուխ 15.* Ջրհեղեղ

Ամառն անցավ, եկավ աշունը: Հորդ անձրևները շատացան, ու մկնյակները ժամերով նստում էին իրենց տնակներում տաք վառարանների մոտ: Մի անգամ, երբ անձրևը կես օրով դադարեց, գյուղակ վերադարձան մկնյակ-դիտակալները, որոնք հաղորդեցին արտակարգ դրության մասին թյունիկների ավանից ոչ հեռու գտնվող հովիտում: Հետախույզները պատմեցին, որ ջրաշատ անձրևներից հետո գետակը, որ անցնում է հովիտով, դուրս է եկել ափերից ու սպառնում է հեղեղել թյունիկների գյուղակը, մանավանդ որ դեպի ավանը տանում է վերջերս կայացած մարտի ժամանակ փորած ճանապարհը: Թյունիկները վերջին ուժերն են գործածում, որպեսզի ջրանցք փորեն, որ ջուրը նրանով գնա, ու ամբարտակներ են սարքում, բայց ամեն ինչ զուր է - հերիք չի անում ոչ ուժը, ոչ էլ ժամանակը: Մկնյակների տոհմը դողդոացրեց այս նորությունից:

Մի քանի վատ կամեցողներ, նրանց թվում նաև Սրիկը, ուրախանում էին վաղեմի հակառակորդների դժբախտության վրա, բայց գազանիկների մեծամասնությունը ցավակցում էին իրենց եղբայրներին: Ջրհեղեղը մեծ փորձանք է:

Ծեր Ծլըմփը մտամոլոր սուս քայլում էր կենտրոնական բացատով, դես ու դեն թեքելով գլուխը ու մտածելով: Անսպասելի կերպով տոհմի առաջ ելույթ ունենալու ցանկություն հայտնեց Աղվանիկը: Նա սպասեց, մինչև կհավաքվեն բոլոր բնակիչները, հազաց, վարանեց ու, ուղղելով վերնաշապիկը, համարձակվեց խոսել:

- Ավագը հիշում է, որ մենք մի ժամանակ եղել ենք միասնական տոհմ: Այո, արդեն շատ տարիներ են անցել այն ժամանակներից, երբ մկնյակներն ու թյունւկները բաժանվեցին, մեր ու նրանց մորթին մի քիչ տարբերվուն է գույնով, նրանք ապրում են հեռու, մենք ավելի շատ կռվել ենք, քան եղել ենք համերաշխ, ու նրանց շորտիկները կոչկվում են այլ ձև, քան մերը ... Բայց ներսից մենք դեռ միասնական անտառի գազաններ ենք, ու այդ իսկ պատճառով պարտավո՛ր ենք փրկելու մեր եղբայրներին: Եթե մենք չօգնենք, ջուրը կոչնչացնի գյուղը, ու թյունիկները կմնան առանց ապաստարանի. առջևում ձմեռ է, ու նրանք ոչ մի կերպ չեն հասցնի կառուցել նոր տներ: Թյունիկները, պարզապես, դատապարտված կլինեն: Մենք իրավունք չունենք նրանց մենակ թողնելու, - ավարտեց իր հուզիչ խոսքը Աղվանիկը:

- Համ էլ նրանց աղջիկներն են սիրունիկ, - բացականչեց Ջումբոն բազմության միջից:

- Ու նրանց թագավորի անունը հզոր է, - ավելացրեց Չըմփիկը:

Տոհմը համաձայն աղմկեց, ու ծեր Ծլըմփը հավանությամբ նայեց Աղվանիկին:

Մկնյակները նորից սկսեցին պատրաստվել արշավի, բայց այս անգամ բոլորովին էլ ոչ ռազմական:

Իսկ այդ ժամանակ թյունիկների գյուղակի մոտերքում ահա արդեն մի քանի օր եռում էր աշխատանքը - ամբողջ տոհմը առու էր փորում, որի միջով պետք է գնար ջուրը ափերից դուրս եկած գետից: Չնայած նրան, որ թյունիկները փորում էին անընդհատ, սակայն չէին հասցնում, ու գյուղը, րոպե առ րոպե, կարող էր ջրի տակ մնալ: Բոլոր արժեքավոր իրերը, ամեն դեպքում, դարսված էին ճյուղերից պատրասված տախտակամածների վրա, իսկ բնակիչներին տեղափոխելու համար պատրաստել էին փչովի մակույկներ: Գազանիկներից շատերը արդեն ընկնում էին հոգնածությունից: Նրանց մռութիկները, մորթին ու շորերը աղտոտված էին ջրիկ, կպչուն ցեխով: Կուկվիմբը, որը առու էր փորում ընկերուհիների հետ միասին, ճարպկորեն բռնելով բահը, հանկարծ նկատեց բարձունքի վրա ինչ-որ կերպարներ: Նա քսեց թաթիկները շորտերին, հետո տրորեց աչքերը: Ավելի ուշադիր նայելով Կուկվիմբը հասկացավ, որ հայտնվել են մկնյակները:

- Մաքասիկ, Կվասուլիկ, տեսեք, ո՛վ է հայտնվել բլրի վրա: Ի՞նչ է նրանց պետք:

- Ահ, այդ կռվարարները: Նրանք եկել են մեզ ձեռ առնելու: Փորի՛…- փնթփնթաց Մաքասիկը, նստեց գետնին, հեծկլտաց, ու, սրբելով քիթիկը թաթիկով, լացեց:

Իսկ Կվասուլիկը ոչինչ չասեց, միայն տխուր հոգոց քաշեց ու շարունակեց հոգնած փորփրել բահով խոնավ, չփչփացնող հողը:

Հիմա արդեն ամբողջ թյունիկների տոհմը ուշադրություն դարձրեց բարձունքի վրայի շարժմանը ու դադարեցրեց աշխատանքը:

- Մկնյակները հետևում են մեզ, - փնթփնթաց ինչ-որ մեկը:

- Սխալ ժամանակին են եկել – ձեռ առնելու, - ավելացրեց մյուս ձայնը տխուր:

Քրյամս թագավորը, որը հիմա բոլորովին արքայական տեսք չուներ, դադարեց փորելը, սրբեց ցեխն ու քրտինքը մռութիկից ու կասկածանքով հայացքը հառեց անկոչ հյուրերին, հենվելով բահին: Հոգոց քաշելով նա հոգնած խրեց աշխատանքի զենքը հողի մեջ ու, ուսերը շտկելով, հայացքով հետևում էր մկնյակներին: Կվասուլիկը կանգնած էր նրա կողքին:

Հյուրերը Ծլըմփի գլխավորությամբ արդեն իջել էին բարձունքից ու մոտեցան գյուղին:

- Ողջո՛ւյն ձեզ, եղբայրներ, - զիլ ձայն տվեց Ծլըմփը: - Առաջնորդ Քրյամս, հարգանքներս: Ես կիանեի թագս, որպեսզի ողջունեմ ձեզ, սակայն արդեն շուտվանից չեմ կարող դա անել: Ազնվությամբ խոստովանեմ, նրա տակ կարգին քորվում է: Երևում է՝ ձեր գյուղը պատրաստվում է ծովային կրուիզի՞:

- Այո, հենց այդպե՛ս, - պատասխանեց Քրյամսը:

- Դե, մենք կարող ենք օգնել լուծելու այդ հարցը: Ճիշտն ասած, դրա համար էլ եկել ենք:

- Պարտական կլինենք, շնորհակա՛լ ենք, - ազդված պատասխանեց Քրյամսը:

- Չե՛ք լինի, չէ որ մենք մի ընտանիք ենք, չնայած որոշ անհասկանալի հարցերին անցյալում: - Եկե՛ք մի քիչ աշխատենք, տղանե՛ր, գոռաց Ծլըմփը ու, քշտելով թագավորական վերնաշապիկի թևքը, ուղղվեց դեպի գյուղը: Մկնյակները բահերով ու տոպրակներով վազեցին նրա ետևից:

Լի ուժով մկնյակների տոհմը միացավ աշխատանքին: Ոգևորված թյունիկները սկսեցին փորել կրկնակի ուժով ու մինչ երեկո պատրաստ էր շրջանցող առուն, քանի դեռ գետի ջուրը չէր հասել գյուղակ: Անձրևը դադարեց:

Մայրամուտի շողերում, լուսավորված մարող արևի կարմիր սկավառակով, երկու տոհմով կանգնել էին բարձունքի վրա ու հոգնած նայում էին, թե ինչպես կեղտոտ, պղտոր ջրի շիթերը ընթանում են, մաքրելով ամեն ինչ իրենց ճանապարհին, բայց շրջանցելով ավանը: Թյունիկների տները փրկված էին: Խռացող իրիկնամուտին մկնյակներն ու թյունիկները սկսեցին շնորհավորել միմյանց, գրկվել ու խփել իրար ուսերի: Մի քանի թյունիկ լացում էին երջանկությունից:

- Իսկ հիմա մենք այնպիսի տոն կսկսենք, որը դեռ չի տեսել անտառը, կամ կիրաժարվեմ առաջնորդի կոչումից, - ամբողջ հովտով մեկ հայտարարեց սարսափելի հոգնած, բայց երջանիկ ու խաղաղված Քրյամսը:

Թյունիկները հրավիրեցին մկնյակներին իրենց գյուղ տոնական քեֆի, խարույկներ վառեցին ու սկսեցին երկար սեղաններ գցել: Խարույկներից ու կանթեղներից լուսացավ, ասես ցերեկ լիներ:

- Պետք է ընդունել, որ դուք այդքան էլ վատ տղաներ չեք, - ասաց Մաքասիկը իր կողքին նստած Զումբոին:
- Շնորհակա՛լ եմ, - ուրախացած սվսվաց Զումբոն:
- Դե…դու էլ…լավն ես…, - սատարեց Մաքասիկը Աղվանիկին:
Նրանց կողքին մի քանի ազատ տեղ կար, և այնտեղ նստեցին երկու թյունիկ, երևում է՝ եղբայր ու քույր:
- Ի՛մ բալեք – լսվեց ուրախ, սուր ձայն, խլացնելով բազմության աղմուկը: Դա գոռում էր մորաքույր Քերուշիկը:
- Մայրի՛կ, ի՞նչ պատահեց - տարակուսանքով հարցրեց Աղվանիկը:
- Փուսի՛կ: Դեղձի՛կ, - հա կրկնելով իր բալիկների անունները մորաքույր Քերուշիկը վազեց գրկելու հենց այդ թյունիկներին՝ եղբայր-քույրիկին: Ինչպես պարզվեց ավելի ուշ, Դեղձիկին ու Փուսիկին, որ կորել էին դեռ փոքրիկ հասակում շատ տարիներ առաջ, գտել էին թյունիկները ու թողել իրենց մոտ ապրելու: Եղբորն ու քույրիկին միացավ Աղվանիկը, իսկ հետո գրկախառնվությունններն ու խմբային երգերը տարածվեցին գյուղով մեկ: Սա արդեն երկրորդ հրաշքն էր մի օրվա ընթացքում: Քեֆն ու տոնակատարությունը գյուղակում շարունակվում էին մինչ առավոտ, երբ հոգնած մկնյակները ու թյունիկները քնեցին:
Թյունիկների գյուղի փրկության տոնակատարությունը շարունակվում էր մի քանի օր: Տոհմերը նշում էին այդ դեպքը անվերջ իրար հյուր գնալով: Սկզբում թյունիկները գնացին մկնյակների մոտ, հետո մկնյակները թյունիկների մոտ, հետո սկսեցին բոլորը իրար հյուր գնալ բոլորովին անկարգորեն, ու մեկուկես շաբաթ հետո արդեն դժվար էր ասել, ովքեր են մկնյակների գյուղում ավելի շատ՝ բուն մկնյակները, թե հյուր եկած թյունիկները:
Ու այդ ժամանակ նորից հայտնվեցին Համսիկն ու Ռոզիկը. Ասես անտառի ոգիներ, հայտնվեցին նրանք վաղորդյան մարախուղից, թաթիկներով թափ տալով խոտի վրայի ցողը: Սկզբից մկնյակները որոշեցին, որ նրանց թվում է ու սա մեկուկես շաբաթվա երկարատև տոների հետևանք է: Սակայն համստերն ու թութակը համառորեն մոտենում էին ավանին, ապացուցելով իրենց իրական լինելը:
- Ի՞նչ է պատահել, - հարցրեց Չլմփիկը, որը ուրիշներից շուտ ուշքի եկավ զարմանքից:
- Ո՛չ, ընկերս, մենք մեր հոժար կամքով ենք եկել, - արտասանեց Համսիկը դերասանի պես: - Արդյո՞ք կգտնվի մի կում ջուր հոգնած ճանապարհորդի համար, - հարցրեց համստերը ու թաթիկները ձգեց դեպի սուրճի բաժակը: Չլմփիկը հոգոց քաշեց, տվեց հյուրին սուրճը ու գնաց նորը պատրաստելու:
- Մարդկանց մոտ դժբախտությո՛ւն է, - հաղորդեց Համսիկը, կում անելով բաժակից, - ջրհեղեղից հետո քաղաքում վնասվել են մի շարք տներ, ու նրանց մեջ – բարձր դղյակ աշտարակներով, որը մարդիք անվանում են «Հեքիաթների Թանգարան» ու որը այցելում է համարյա բոլոր քաղաքի բնակչությունը, մանավանդ երեխաները, ու բազում զբոսաշրջիկներ:
- Մենք լսեցինք մեր տանտերերի խոսակցությունը: Դա շա՛տ կարևոր կառույց է բոլոր մարդկանց համար, սակայն ջրհեղեղի պատճառով կառույցի մի մասը քանդվել է ու գտնվում է վթարային վիճակում: - Եթե շուտ չվերանորոգել, կառույցը կփլվի, - ավելացրեց Ռոզիկը:
- Հիմա մարդիք գումար են հավաքում ամբողջ քաղաքով մեկ շտապ վերանորոգման համար, բայց տանտերերը պնդում են, որ այդքան միջոց քաղաքի բնակիչների մոտ չկա ու շենքը դատապարտված է քանդմանը, - շարունակեց Համսիկը:
- Ու ես հիշեցի, որ դուք, Կորցրած Գանձերի Մեծագույն Որոնողները ու Արժեքավոր Իրերի Վերադարձնողները, Մկնյակների Ուժեղագույն Տոհմը, համագոյակցում եք մարդկանց հետ արդեն շատ տարիներ ու օգնում եք նրանց: Միգուցե օգնեք և ա՞յս անգամ, - նորից միացավ զրույցին Ռոզիկը:
- Կներիքե՞ն արդյոք ձեր գանձերը, որպեսզի փրկվի մարդկանց այնքա՛ն պետքական շենքը, որ միայն դրա մասին են խոսում քաղաքում, - հույսով հարցրեց Համսիկը:
Տոհմը սուս-փուս նայեց Չլըմփին, ու ծեր թագավորը քայլ արեց դեպի առաջ:
- Շատ տարիներ մենք հավաքել ենք արժեքավոր իրեր ու դարսել մեր պահոցներում, ու ես կարծում եմ, որ այնտեղ բավականին գանձեր կա: Բայց եթե դա էլ հերիք չանի, ապա մենք նոր ընկերներ ունենք - թյունիկներ, որոնք նույն նպատակին են ծառայում՝ օգնում են մարդկանց: Ու

նրանք մեզ կօգնեն, - համոզված ասաց Շլըմփը ու հենվեց իր ձեռնափայտին: Քրյամսը համաձայն գլխով արեց:

Մկնյակների տոհմը հավանությամբ աղմկեց, լսվեցին բացականչություններ «Հենց այդպե՛ս», «Կօգնե՛նք մարդկանց»: Սակայն որտեղ է այդ վերանորոգում պահանջող շենքը և ուր է պետք տանել գանձերը, ոչ-ոք չգիտեր: Պարզ է՝ գտնել այդ տեղը ցանկություն հայտնեցին մեր հին բարեկամները - Աղվանիկը, Ջումբոն ու Չլմփիկը: Նրանք այնքա՛ն էին ուզում ցուցադրել իրենց հետախուզական խիզախությունն ու ճարպկությունը, որ տոհմը անվերապահորեն համաձայնվեց նրանց տալ այդպիսի հնարավորություն: Երկար խորհրդակցությունից հետո որոշում կայացվեց գնալ հետախուզության ցերեկով:

### *Գլուխ 17.* Հետախուզությունը քաղաքում ու գանձերի առաքումը «Հեքիաթների Թանգարան»

- Կարևորը հետախուզության մեջ քողարկումն է, - խորամտորեն բարբառեց Աղվանիկը, դեպի վեր բարձրացնելով ցուցամատը:

Աղվանիկը, Ջումբոն ու Չլմփիկը կանգնած նայում էին մարդկանց շորերի կույտին, որ բերել էին մկնյակների գյուղի բոլոր բնակիչները: Փորփրելով մի քանի րոպե ընկերները ընտրեցին մանկական շագանակագույն վերարկու, մաշված կապույտ մաշիկներ, թունավոր-դեղին վանդակավոր շարֆ, կանաչ ձեռնոցներ ու մեծ սև գլանագլխարկ: Սակայն նույնիսկ մանկական վերարկուն բոլոր մկնյակներին շա-ա-ա-ատ մեծ էր: Ինչ-որ մեկը առաջարկեց Աղվանիկին կանգնել Չլմփիկի ուսերին, իսկ Ջումբոյին բարձրանալ ամենավերևը: Ընկերները հենց այդպես էլ արեցին, ու փոքրիկ վերարկուն եղավ իսկը նրանց վրայով: Այդ բուրգի վրա կապեցին շարֆը ու դրեցին փոշոտ գլանագլխարկը, սակայն Ջումբոն լիովին ծածկվեց նրանով, այդ պատճառով որոշեցին գլխի հանդերձում երկու անցք կտրել՝ աչքերի համար:

- Սև գլանագլխարկով, հինավուրձ զգեստով, ձեր քաղաքը տոնի շատ էի շտապում, - երգեց Համսիկը ինչ-որ տեղ լսած տողերը ու գովեց զգեստը:

Մկնյակների տոհմը խմբով հռհռաց ծիծաղելի բուրգի վրա, որ ավելի շատ նման էր բոստանի խրտվիլակի, քան մարդու, բայց ուրիշ տարբերակ չկար:

- Քողարկումը կարող էր ավելի հաջող լինել, այդ պատճառով զգույշ եղեք, - խրատում էր հետախույզներին Շլըմփը:

Մկնյակները Համսիկի ու Ռոզիկի ուղեկցությամբ հասան քաղաքի ծայրամասին, որտեղ և հագան այդ արտասովոր զգեստը:

- Դե, ձեր տուն գնալու ժամանակն է, - ուզում էր հրաժեշտ տալ Ջումբոն:

- Ո՛չ մի դեպքում, ես բաց չեմ թողնի այսպիսի արկածը, - պատասպանեց Համսիկը

- Արկածներ սիրող գտնվե՛ց, - փնթփնթաց Ռոզիկը, նայելով մկնյակին, բայց ինքն էլ մնաց ընկերների հետ:

- Ուրեմն, դեպի առա՛ջ, - ձայն տվեց Աղվանիկը վերարկուի միջից:

- Դեպի առա՛ջ, - մի փոքր լարվելով ավելացրեց Չլմփիկը ու քաշ տվեց վերարկուից ու մկնյակներից շինվածքը իր հզոր ուսերի վրա քաղաք:

Հավասարակշռության համար Չլմփիկը վերցրեց երկու փայտ: Համսիկի վզակալին կապեցին վերարկուի գրպանից գտած հին պարանի ծայրը, երկրորդ ծայրը փաթաթեցին փայտին, դա այնպիսի տեսք ուներ, ասես ընտանի կենդանին զբոսանքի է դուրս եկել, բայց որ դա համստեր է - ապա ամեն մի տանտեր իր տարօրինակությունն ունի: Ռոզիկը նստեց վերարկուով կերպարի ուսին: Տեսարանը գունագեղ ստացվեց: Բուրգը մի պահ կանգնեց ու արագ շարժվեց: Արդեն մի քանի րոպե հետո վաղորդյան արևի շողերի տակ ընկերները քայլում էին գլաքարով ծածկված քաղաքի փողոցներով: Անցորդներ քիչ կար, ու ոչ-ոք առանձնապես չէր հետաքրքրվում վերարկու հագած տարօրինակ կերպարով, շարֆով փաթաթված ու հնաձև գլանագլխարկով:

Չնայած՝ որոշ դիմացից եկողներից ճանապարհում էին հինավուրց զգեստը զարմացած հայացքով, իսկ ոմանք նույնիսկ վազում էին փողոցի հակառակ կողմը:

Վերարկուով կերպարը քայլում էր ձգումներով, ժամանակ առ ժամանակ մեկ թեքվելով ետ կամ առաջ, մեկ օրորվելով մի կողմից մյուսը: Այնուամենայնիվ, Չլմփիկի ձեռքի փայտերը հնարավորություն էին տալիս կերպարին քայլել բավականին ուղիղ:

- Մեկ, երկու, երեք: Ինչպե՞ս է լսվում, - Զումբոն փորձում էր կապ հաստատել բուրգի ներսում:

- Երեք, երկու, մե՛կ: Լսվում է գերազա՛նց: - Հեյ, Չլմփիկ, մեքենայական բաժին, ինչպե՞ս է լսվում: Աղվանիկը լավ տրամադրություն ուներ, չնայած նրան, որ ոչինչ չէր տեսնում, ու, ճիշտն ասած , ոչինչ չէր անում:

Չլմփիկը քարշ էր տալիս իր վրա երկու ընկերոջն ու ահագին շոր, ու կատակելու ժամանակ չուներ, սակայն պետք էր պատասխանել:

- Լսվում է նորմալ, ի՞նչ է երևում, ո՞ւր է պետք գնալ: Չլմփիկը քայլում էր միջին արագությամբ:

- Մեքենայական բաժինը հարցնում է, ո՞ւր գնալ, - Աղվանիկը փոխանցեց հարցը ներքևից վերև:

Զումբոն կպավ գալարագլխարկի մեջ կտրած անցքերին, շարժեց դեպի աջ-ձախ ու բարձր շշնջաց դեպի ցած.

- Գնում ենք ուղիղ, առջևում քաղաքի գլխավոր հրապարակն է:

- Իսկ պաղպաղակ հրապարակում կա՞, - Չլմփիկը կարգին քրտնել էր ու սովածացել, այդ պատճառով դեմ չէր լինի ինչ-որ համեղ ուտելիք վայելելուց:

- Ես էլ կանգ կառնեի ուտելու համար, հոգնել եմ ինչ-որ, - ձայն տվեց Համսիկը:

Խումբը դուրս եկավ հրապարակ, ու Զումբոն պտտեցրեց գալարագլխարկը, փնտրելով պաղպաղակի վաճառարկղը: Նկատելով պաղպաղակ վաճառողին Չլմփիկը օրորեց գլխարկը:

- Մի հատ կրեմ-բրյուլե, - խնդրեց Ռոզիկը, երբ նրանք հայտնվեցին վաճառասեղանի մոտ:

- Դուք համաձա՞յն եք ձեր թռչունի հետ, - զարմացած հարցրեց պաղպաղակ վաճառողը, գեր, բեղավոր տղամարդը խոհարարի գոգնոցով: Վերարկու հագած բուրգը սուս գլխով արեց: Թևքից դուրս ընկավ մի մետաղադրամ: Պաղպաղակ վաճառողը մեկնեց մի մեծ փոռիկ սպիտակ վերնամասով: Նույն ձևով՝ սուս-փուս տարօրինակ գլանագլխարկով վերարկուն, վերցնելով պաղպաղակը դատարկ թևքով, մի կողմ անցավ, ու կրեմ-բրյուլեն սկզբում խորհրդավոր ձևով կորավ ինչ-որ տեղ շորի ծալքերում, հետո դուրս եկավ շատ կարճացած վիճակով, իսկ մի րոպեից լրիվ անհետացավ. բոլոր բուրգի երեք մասը նա կերան, չմոռանալով կիսվել քողարկող խմբի հետ՝ - «պարանով համստերի» ու «ձեր թռչունի»:

- Լա՛վ, իսկ որտե՞ղ մենք փնտրենք այդ աշտարակներով դղյակը, որը անվանում են «Հեքիաթների Թանգարան» - հետաքրքրվեց Չլմփիկը:

- Դե հենց սա է – պատասխանեց Ռոզիկը ու թևիկով ցույց տվեց մեծ գեղեցիկ շենքին հինավուրց դղյակի տեսքով:

Ընկերները հայացք գցեցին իսկական գեղեցիկ դղյակին մեծ ու փոքր աշտարակներով, գույնզգույն դրոշների, դրոշակների ու պատվադրոշների բազմությամբ:

- Դե ի՛նչ, նպատակը գտնված է, պետք է վերադառնալ անտառ, - ասաց Աղվանիկը: - Իսկ ձեզ, - դիմեց նա Համսիկին ու Ռոզիկին, - լավ կլինի տուն վերադառնալ, քանի դեռ Սոֆիան չի հայտնաբերել կորուստը:

- Այո՛, այսօրվա համար հերիք եղավ արկածներից - համաձայնվեց Համսիկը:

Վերադառնալով գյուղակ, մկնյակները կիսվեցին տեսածով:

Արդեն մի ժամից հետո բոլոր գանձերը պահոցներում տեսակավորված էին, դարսված սնդուկների մեջ ու հաշված: Մարկանց կողմից կորցված կամ մոռացված մատանիներից, շղթաներից, կրծքազարդերից, ականջօղներից և ուրիշ արծաթե զարդերից աչքերը շաղվում էին, իսկ թանկարժեք քարերի փայլից հնարավոր էր կուրանալ: Թյունիկների գյուղը սուրհանդակ ուղարկեցին հաղորդելու, որ ժամանակն է նաև իրենց արժեքավոր իրերը տեղ հասցնելու:

Թյունիկները ժամանեցին անմիջապես, ու ամբողջ գիշեր երկու տոհմով տանում էին գանձերը անտառից քաղաք, ուր մեծագույն զգուշությամբ բոլոր գանձերը դրվում էին սնդուկների մեջ ահռելի դահլիճի կենտրոնում հենց այն բարձր գեղեցիկ աշտարակներով դղյակի, որը շտապ վերանորոգման կարիք ուներ:

Դրանից հետո մկնյակներն ու թյունիկները շտապ ու աննկատ թողեցին քաղաքը, անտառի բացատում հրաժեշտ տվեցին իրար ու գնացին իրենց գյուղերը:

***Գլուխ 18.* Մարդիք ավելի շատ հավատում են հրաշքների, քան անտառի բնակիչների օգնությանը**

Սկսվեց պառավի ամառը, ու նորից նույն ընտանիքը հանգստանում էր անտառի բացատում. հայրիկը, մայրիկը, եղբայրն ու քույրիկը – Վիտյան ու Սոֆին:

Բոլորը ուրախանում էին, ու հայրիկը պատմեց երեխաներին, ինչպես վերջերս տեղի ունեցավ իսկական հրաշք. ջրհեղեղից վնասված «Հեքիաթների Թանգարանում» անսպասելիորեն չգիտես, թե որտեղից, հայտնվեցին վերանորոգման համար միջոցներ - թանկարժեք իրեր անհայտ բարեգործների կողմից: Դա այնքան տարօրինակ էր ու առեղծվածային, որ այդ դեպքի մասին գրել էին թերթերում:

- Հայրիկ, իսկ այդ գանձերը արդյո՞ք մկնյակները չեն բերել, - հարցրեց տղան:

- Կամ էլ թյունիկները, - ավելացրեց նրա քույրիկը:

–Իհարկե ո՛չ, իմ սիրելինե՛ր, - ասաց մայրիկը, գրկելով երեխաներին:

–Դա հաստատ մարդկանցից ինչ-որ մեկն է արել – ավելացրեց հայրիլը:

Երեխաները նորից սկսեցին վազվզել բացատով, ու հանկարծ տղան ուրախ բացականչեց.

- Մայրի՛կ: Հայրի՛կ: Ես իմ բեռնատար մեքենան գտա, որը կորցրել էի անցյալ ամառ, - տղան բարձրացրեց մեքենան ու ցույց տվեց ծնողներին:

- Դե տեսնո՞ւմ ես, ուրեմն դա մկնյակները չեն տարել, - կատակեց հայրիկը, իսկ մայրիկը ծիծաղեց:

Երեկոյան երջանիկ երեխաները նստեցին ծնողների հետ միասին մեքենա ու գնացին քաղաք:

Հենց որ լռեց շարժիչի աղմուկը ու մեքենան անհետացավ հեռվում, բարձր դեղնին տվող թփերից հայտնվեցին Աղվանիկը, Ջումբոն ու Չլմփիկը: Աղվանիկը նայեց մեքենայի ետևից ու ուղղեց իր շալվարիկը:

- Ափսո՛ս, որ ոչ-ոք չի իմանա մեր արարքի մասին, - ասաց Աղվանիկը ու նայեց ընկերներին:

- Մենք գաղտնի հերոսներ ենք, քողարկված անտառի խորքում, - հպարտ արտասանեց Ջումբոն:

- Ու հայտնի լինելը մեզ հեչ էլ պետք չի, դրանից այնքա՛ն բարդություններ են առաջանում, - ավելացրեց Չլմփիկը, - հարցազրույցներ թերթերում, ինքնագրեր, երկրպագուների մի ամբողջ ծով...

- Այո, մկնյակներին ավելի լավ է մարդկանց համար անհայտ մնալը: Առնվազն՝ առայժմ, - համաձայնվեց Աղվանիկը: - Դե ի՛նչ, եղբայրներ, սկսում ենք կորցրած գանձերի փնտրումնե՞րը:

Ջումբոն ու Չլփիկը համաձայն գլխով արեցին ու սկսեցին զննել մարդկանց հանգստավայրը, ինչպես անում էին դա արդեն շատ տարիների ընթացքում:

Իսկ Աղվանիկը խոտի մեջ գտավ սառցաշաքար ու, կամացուկ հանելով թղթից, սկսեց գաղտնի ընկերներից լպստել, աչքերը կկոծելով հաճույքից:

ՎԵՐՋ